ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ա. ԲԱՐՁՐ ԴԱՍԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

IX—XI դարերում Հայաստանում առաջացան բազմաթիվ քաղաքներ։ Դրանք պատկանում էին խոշոր ֆեոդալներին՝ թագավորներին, իշխաններին, կազմելով նրանց տիրույթը։ Կային նաև փոքր թվով քաղաքներ, որոնք առանձին ֆեոդալների չէին պատկանում և գտնվում էին ընդհանուր պետական ենթակայության ներքո։ Վերջիններս տեղադրված էին առավելապես Արևմտյան Հայաստանում, որը միակցված էր բյուզանդական կայսրությանը։

XIII դարում Հայաստանում առաջանում են նաև մասնավոր տիրույթ հանդիսացող քաղաքներ, այլ խոսքով՝ քաղաքներից մի քանիսը դառնում են առանձին մեծատունների սեփական տիրույթը։ Սակայն այս երևույթը Հայաստանում քիչ թե շատ նշանակալից տարածում չգտավ և կարճատև կյանք ունեցավ։

Նշված բոլոր տիպի քաղաքներում էլ բնակվում էին որոշ թվով ազնվականներ՝ քաղաքի տեր ֆեոդալները, նրանց մերձավորները, թագավորական և իշխանական արքունիքների ազնվական պաշտոնեությունը և ուրիշները։

Քաղաքների տնտեսական աճը արտահայտվում էր ոչ միայն արհեստագործության և առևտրի զարգացմամբ, այլև դրանց հետ, ինչպես և քաղաքի բնակչության տնտեսական կարիքների սպասարկման հետ կապված հասութաբեր հաստատությունների՝ կարավանատների (խանապար), իջևան-պանդոկների (փնդուկ), հյուրատների, ջրաղացների, ձիթհանների, վարձով տրվող տների ու կուղպակ-արհեստանոցների առաջացմամբ և տարածմամբ։ Այս ամենը ձգողական ուժ էր ստանում և դեպի իրեն էր գրավում ազնվականներին, հոգևորականներին, իսկ հետզհետե նաև մեծատուններին։ Այսպիսով քաղաքը տնտեսական հնարավորություններ էր ընձեռում նաև իշխող դասակարգին պատկանող բնակչության թվական աճի համար։ Այս տեսակետից խիստ բնորոշ է Անիի պատմությունը, որտեղ բնակություն էին հաստատել զգալի թվով ազնվականներ և ավելի մեծ թվով հոգևորականներ։ Սրանք այս կամ այն չափով մասնակցություն էին ցուցաբերում քաղաքում կատարվող առևտրին և տեր էին դարձել վերևում նշված հասութաբեր հաստատություններին։ Այդ հանգամանքը ցայտուն կերպով դրսևորվել է Անիի և նրա մերձակայքի ճարտարապետական հուշարձանների, առավելապես վանքերի ու եկեղեցիների պատերի վրա փորագրված մեծ թվով արձանագրությունների մեջ։

Ազնվականության ձգտումը՝ ունենալու հասութաբեր հաստատություններ, իր արտահայտությունը գտել է նաև Մխիթար Գոշի Դատաստանագրքում, որտեղ սահմանվում է, թե քաղաք, գյուղակ կամ բերդ կառուցելը, աշխարհագիր

կատարելը, դրամ հատելը, մեծ գետերի վրա կամուրջ, նաև հոգևոր տուն (հյուրանոց) և «իշխանաց տուն» կառուցելը թագավորի իրավունքն է, իսկ մյուս իշխանները կարող են այդ իրավունքը ձեռք բերել թագավորի թույլտվությամբ[1]։

Անիում, օրինակ, բնակվում էին մի շարք ազնվական տոհմեր՝ Բագրատունի թագավորներն իրենց մերձավորներով, Պահլավունի իշխանները, Վեստ Սարգսի, Ապուղամրենց, հետագայում Զաքարյան և այլ տոհմերը։

Ազնվականությունը իշխող ամենարարձր և արտոնյալ դասն էր, որն իդեալականացված է նույն դասի դադափարախոսների կողմից։ Բացի խոշոր ազնվականներից, քաղաքում բնակվում էին միջին և մանր ազնվականները՝ ազատները, որոնց զգալի մասը զինվորական և այլ պաշտոններ ուներ։

Առանձին տիրապետող դաս էր կազմում հոգևորականությունը։ Դեռևս V դարից բարձր հոգևորականությունը՝ կաթողիկոսը, եպիսկոպոսները, վանքերի առաջնորդները հավասարեցված էին խոշոր ազնվականությանը, իսկ արեղաները, քահանաները՝ մանր ազնվականներին—ազատներին։ XII—XIII դարերի համար բնորոշ է ունեցվածքային տարբերությունների խորացումը ինչպես աշխարհիկ մարդկանց, նույնպես և հոգևորականների մեջ։

Բարձր հոգևորականության թվում կային այնպիսիները, որոնք կալվածներով և հարստությամբ մրցում էին խոշոր իշխանների հետ։ Այդպիսին էր, օրինակ, Պետրոս կաթողիկոսը, որի գանձերի մեծությունը հոռոմներին, այսինքն բյուզանդացիներին էլ հայտնի էր[2] և որի հայրապետանոցի ճոխությունը մրցում էր արքունիքի ճոխության հետ։ «Վասն զի յորժամ էր տէր Պետրոս յաթոռ հայրապետութեանն և ի Հայաստան աշխարհին, ունէր կազմութիւն հայրենեաց՝ տուեալ ի թագաւորացն Հայոց՝ հինգ հարիւր գեղ անուանի և մեծանիստ և շահաւէտ ընտիր ընտիր, նոյնպէս և եպիսկոպոսս հինգ հարիւր փառաւոր և գաւառապետս ի վերայ եօթն հարիւր թիմի հանապազ. երկոտասան եպիսկոպոս և չորս վարդապետ ի տանն հայրապետին և վաթսուն երէց ի կրօնաւորաց և յաշխարհականաց՝ հինգ հարիւր. և չէր նուազս աթոռ հայրապետութեանն քան զթագաւորութեանն Հայոց»[3]։

Առասպելական էին նաև Արծնի քորեպիսկոպոս Դավթուկի հարստությունները։ Մատթեոս Ուռհայեցին գրում է. «զայս բազում անգամ լուեալ է մեր ի բազմաց յաղագս քորեպիսկոպոսին՝ որ ասէին Դավթուկ, եթէ զգանձատունն նորա Արրիհիմն էառ և բառնասուն ուղտ բարձան զգանձատունն նորայ. ութ հարիւր վեցկի եզանց ելանէին ի տանէ նորա։ Եւ կայր յայնժամ ութ հարիւր եկեղեցի ընդ պատարագով»[4]։

Եթե փորձեինք բացատրել Արծնի քորեպիսկոպոսի վերաբերյալ այս ավանդությունը, ապա հարկ կլիներ նշել, որ նրա առասպելական հարստությունների աղբյուրը այն հսկայական կալվածքներն էին, որոնք մշակվում էին 800 վեցկն (այսինքն երեքական լուծ) եզների միջոցով, և այն ութ հարյուր եկեղեցիները, որոնք հարկատու էին քորեպիսկոպոսին. թեկուզ դա չափազանցություն նկատվի։ Արծն մեծ քաղաքում քորեպիսկոպոսը հնարավորություն ուներ իրացնել իր հասույթները և մեծ գանձեր կուտակել։

[1] Ախիսար Ռոշ, Դատաստանագիրք, էջ 304։
[2] Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, էջ 137։
[3] Նույն տեղում, էջ 153—154։
[4] Նույն տեղում, էջ 103։

Ահա և միջին կարողության հողևորականի մի օրինակ. անեցի Աբրահամ երեցը, որը պատմագիր Սամվել Անեցու թոռն էր, Խծկոնքի վանքին նվիրել է երկու տուն և երկու կուզպակ[1]։ Իհարկե, այդ երեցի ունեցվածքը նվիրաբերածներից շատ ավելի էր։

Անիում և այլ քաղաքներում մեծ թվով վանքեր ու եկեղեցիներ, որոշ քաղաքներում էլ մզկիթներ կային, և քաղաքներում բնակվող հողևորականության թիվը բավականաչափ մեծ էր։

Քաղաքային անաշխատ բնակչության թվին էր պատկանում նաև զինվորականությունը։ Քաղաքի տեր ֆեոդալներն ունեին իրենց զինվորական ջոկատները, որոնք այնքան ավելի ստվարաթիվ էին, որքան ֆեոդալը խոշոր էր, այսինքն՝ որքան մեծ էին ֆեոդալի տիրույթներն ու նրանցից ստացվող հասույթները, կամ հարկատու բնակչության թիվը։ Այդ զորքը կոչված էր ճնշելու ֆեոդալներին հպատակ բնակչության դիմադրությունն ու ընդվզումները և կռվելու արտաքին թշնամիների դեմ։ Զորքերի հրամանատարությունը ազնվականների կամ ազատների ձեռքում էր։ Հեծյալ զորքի հրամանատարին կամ հեծելավարին վերաբերող մի հատվածում ասվում է, թե սա է «արմատ կենաց՝ զարմի յաղատաց գովեալ գմիր (հերոս) ի զաւրականաց, ահեղ յաղթող ի յամրարշտաց...»[2]։

Զինվորականներն այս ժամանակաշրջանում ծառայում էին հոգով կամ վարձով։ Իրրև անարտադրող խավ՝ նրանք ապրում էին հիմնական արտադրողների հաշվին։

Զինվորների, նրանց դերի և վարձատրության վերաբերյալ կարևոր տեղեկություններ կան Ներսես Շնորհալու «Ընդհանրական թղթում»։ Հեղինակը ասում է, որ կային «դասք զինուորաց ընդ ձեռամբ իշխանութեանց և պետութեանց»։ Այս զինվորները ստանում էին հոգ (ռոճիկ) և թոշակ, որոնց պակասելու դեպքում նրանք փախչում էին կամ անհնազանդություն ցուցաբերում, ուստի կաթողիկոսը կոչ է անում զինվորներին հնազանդ լինել իրենց մարմնավոր տերերին և միամտությամբ ծառայել նրանց։ «Իսկ որ նենգաւոր գտանի բանիւ կամ գործով կամ անձիւ տեառն իւրոյ կամ տեղւոյ ամրականի նորա կամ ընչից նորին. աստուծոյ է նենգութիւնն և ոչ մարդոյ։

Ատելի է օրինակ մերոց նենգութիւն տէրանց և սիրելի է հաւատարմութիւն»[3]։

Միանգամայն պարզ է, թե ում շահերն է արտահայտում Ներսես Շնորհալին։

Բացի բուն զինվորական ծառայությունից, զինվորները պարտավոր էին կատարել իրենց տերերի հանձնարարությունները և հարկ եղած դեպքում ուժ գործադրել բնակչության նկատմամբ։ Շնորհալին ասում է, որ զինվորը տիրոջ կողմից կարող է կարգվել «ի գործ վերակացութեան», կամ առաքվել «ի տնօրէնութիւն ինչ բանի», այսինքն բնակչության կոռային, պարհակային և աշխատանքային այլ պարտավորությունների կատարման ժամանակ զինվորը կարող էր կարգվել իրրև վերակացու, նա կարող էր ուղեկցել և սատարել հարկահաններին, երբեմն զենքի ուժով ճնշել անհնազանդներին

[1] Ալիշան, Շիրակ. էջ 128։
[2] Մատենադարանի ձեռագիր № 8030, էջ 224ա։
[3] Ներսես կաթողիկոս, Թուղթ ընդհանրական, էջ 100—101։

բանտարկել կամ պատժել նրանց և այլն։ Այս ամենի ժամանակ գինվորները գործադրում էին այն աստիճան դաժան բռնություններ, որ կաթողիկոսը նրանց կոչ է անում իրավունքով վարվել և դահճի դաժանություն չցուցաբերել, անտեղի արյունհեղություն չկատարել[1]։

Քաղաքներում առաջացել էր նաև մեծատունների նոր վերնախավը, որի ծագման, դերի և դիրքի մասին հարկ կա ավելի մանրամասն խոսել։

«Մեծատուն» ասելով սկզբնապես հասկացել են առհասարակ խոշոր հարուստներին, և առաջին հերթին ֆեոդալներին։ Մի թարգմանական հին գրվածքում, օրինակ, ասվում է՝ «Ես որդի էի մեծատան իշխանի»[2]։ Հետագայում մեծատուն տերմինը պահպանում է «խոշոր հարուստ» ընդհանուր իմաստը, սակայն ստանում է որոշակի առում և գործածվում է արդեն ոչ թե իշխանների, այլ առևտրի, վաշխառության և զանազան պաշտոնների շնորհիվ հարստություն ու համբավ ձեռք բերած այնպիսի տների համար, որոնք իշխանական ծագում չունեին և բարձրացել էին մանր ազնվականների և ավելի հաճախ բոլորովին ազնվական ծագում չունեցող քաղաքացիների թվից։

Մեծատան համբավ ստանալով, այս նորելուկ հարուստները ձեռք են բերում նաև «պարոն» պատվանունը, որը XII—XIII դարերում գործածված է գերազանցապես նրանց համար։ Միայն առանձին դեպքերում պարոն կոչվել են քաղաքապետ իշխանավորները կամ քաղաքի տեր իշխաններն ու մեծատունները, որոնք միաժամանակ հանդիսանում էին տվյալ քաղաքի քաղաքապետը։ Այդ բանը շատ պարզ երևում է մանավանդ Անիի և նրա մերձակայքի վիմական արձանագրություններից[3]։ Իսկ իշխանները, եթե քաղաքատեր-քաղաքապետ չէին, սովորաբար կրում էին ոչ թե պարոն, այլ «պատրոն» պատվանունը[4], թեև կան նաև բացառություններ։

XIV դարում և դրանից հետո պարոն տիտղոսը որոշ փոփոխություններ է կրում, բայց դա մեր թեմայի ժամանակներին չի վերաբերում։

Աղբյուրների տեղեկությունները մեծատունների մասին որքան էլ պատահական լինեն, այնուամենայնիվ թույլ են տալիս դաղափար կազմելու այդ խավի կազմի և հարստության աղբյուրների մասին, ուստի և հարցի քննարկման համար մի շարք վկայություններ մեջ կբերվեն ժամանակագրական կարգով։

988 թ. հիշատակված է Կիրակոս վաճառականը, որի համար Հովհաննես գրիչը ավետարան է օրինակել Բջնիում[5]։

1042 թ. Բագնայրի մի արձանագրության մեջ հիշատակված ոմն հարուստ Գրիգոր Ծաղիկը եկեղեցուն նվիրել է դանձագին կուղպակներ, որոնք գտնվել են Անիում, մի այլ մեծատան՝ իշխանատեր Վասիլի փնդուկի դիմաց[6]։

1054 թ., երբ սելջուկները գրավեցին Կարսը, պատմիչի ասելով ողբի արժանի գործեր կատարեցին։ «Մեծահարկի և պատուական վաճառականք չարաչար մահուամբ սպանեալք, երիտասարդք և ըմբշամարտք ի փողոցսն սրակո-

[1] Ներսես կաթողիկոս, Թուղթ բնդհանրական, էջ 104։
[2] «Թանգարան հայկական հին և նոր գրության», «Անկանոն գիրք նոր կտակարանաց», էջ 118։
[3] Այիշան, Շիրակ, էջ 79, 83, 82, 74, 116, 117 և այլն։
[4] Նույն տեղում, էջ 49, 63—64, 82, 74, 86, 150 և այլն։
[5] «Շողակաթ», էջ 190։
[6] «Վիմական տարեգիր», էջ 22։

տորք»[1]։ Այստեղ, ամենից առաջ, հիշատակված են մեծահարկի վաճառականները, որովհետև թագավորները և ազնվականները ամրանալով միջնարերդում կոտորածից զերծ մնացին։

Մի ձեռագրի 1058 թ. գրված հիշատակարանում խոսվում է պարոն Շուշուրի որդի պարոն Ամրակումի և սրա որդի Ուլնո Մանուկի մասին։ Ուրեմն դա պարոնների մի տուն էր, որը հայտնի է երեք սերնդի տեսականությամբ։

Սելջուկների տիրապետության առաջին շրջանում, երբ քաղաքները ծանր հարված ստացան, իհարկե, վաճառականներն ու մեծատունները բոլորովին չանհետացան, սակայն նրանց մասին տեղեկություններ չեն պահպանվել և XII դարի մեծատուններից քչերի անուններն են մեզ հասել։ Աղբյուրներում և գրականության մեջ կարելի է գտնել այդ դարի 13—15 մեծատան անուն։ XII դարի կեսերին հիշված են Սեբաստիայի դատավոր ոմն Թոտոսը[3], Անեցի Աբրահամը, որն իր ծախսով կառուցել է տվել Անիի պարսպի բուրգերից մեկը[4]։ Մնացածների անունները հիշատակված են դարավերջին։

Չափազանց մեծ է մեծատուն պարոնների թիվը XIII դարում։ Աղբյուրներում և գրականության մեջ հանդիպում են հարյուրից ավելի մեծատունների անուններ։ Ստորև կբերվեն մի շարք վկայություններ, որոնք ավելի որոշակիորեն են բնութագրում մեծատունների խավը։

1204 թ. Մշո սբ. Ղազարի վանքում գրված, բռնագրավված ու խլաթ տարված ձեռագրի ետ գնման համար դրամական միջոցներ են տվել Մշո և Խլաթի մի քանի մեծատուններ ու տանուտերեր, դրանց թվում խլաթեցի պարոններ Խոցաղեղը և Վարդիկը[5]։ Նույն ձեռագրի ստացողը կամ գնորդը եղել է բարբերդցի պարոն Վասուի որդի պատրոն Աստվածատուրը, որն իր հայրենի քաղաքի հայերի առաջնորդն էր՝ ռայիսը[6]։

Երևան քաղաքի մեծատուններից հիշատակված են պատրոն կամ ըմքել Վարդը[7], Դոլը[8] և Սարգիսը[9], որոնց անունները պահպանվել են Կեչառուրի, Գեղարդի արձանագրությունների մեջ։ Սրանք հանդես են գալիս պատրոն կամ պարոն պատվանունով։ Կեչառիսի մի արձանագրության մեջ Վարդը իրեն անվանում է «Ես պատրոն Վարդ Երևանայ...»[10], իսկ Այրիվանքի արձանագրություններից մեկում ասված է. «Ես Դոլս և Երևանոյ տանուտերքս և պարոնայքս» ընծաներ ենք տվել Այրիվանքին[11]։

Լոռե քաղաքի մեծատուններից էին Աբրահամը և սրա որդի Խաչերեսը։ Այս Խաչերես Լոռեցին 1209 թ. Բագնայրի եկեղեցուն նվիրել է Անիում գտնվող գանձադին յոթ կուզպակ և երեք տուն[12]։

---

[1] Արիստակես Լաստիվերտցի. Պատմություն, էջ 62։
[2] Գարեգին Ա. կաթողիկոս, Ցիշատակարանք, էջ 235։
[3] «Հայոց նոր վկաները», էջ 8։
[4] Ալիշան, Շիրակ. էջ 41։
[5] Գարեգին Ա. կաթողիկոս, Ցիշատակարանք, էջ 717 718։
[6] Նույն տեղում, էջ 702, 711։
[7] Ալիշան, Այրարատ, էջ 262։
[8] Ստեփանոս վ. Մխիթարեանց, Ստորոգութիւն մեծի ուխտին Այրիվանայ, էջ 50։
[9] Նույն տեղում, էջ 8։
[10] Ալիշան, Այրարատ, էջ 162։
[11] Ստեփանոս վ. Մխիթարեանց, Ստորոգութիւն մեծի ուխտին Այրիվանայ սրբոյն Գեղարդայ, Վաղարշապատ, 1873, էջ 50։
[12] Ալիշան, Շիրակ, էջ 117։

1211 թ. Բագարանի պարոնն էր ոմն Գրիգոր[1]։

Նույն 1211 թ. Սերաստիայում գրված մի նկարագրդ ավետարանի հիշատակարանում խոսվում է Ավետարանի գրչությանն օժանդակած մեծատունների, այն է՝ Սարգիս պարոնի և նրա որդիներ Հովհաննեսի, Ուքանի և Պապքանի տոհմի մասին[2]։ Գոքր ինչ ուշ հիշատակվում են երեզցի պարոններ Վասուսը, նրա որդի Սարգիսը և Ապլասաթ, Ընձակ և Խաչոտ պարոնները[3]։

XIII դարի առաջին կեսի խոշորագույն փոդատեր, վաշխառու մեծատունը Տիգրան Հոնենցն էր։ Սա ազնվական ծագում չուներ և, ինչպես երևում է վիմական արձանագրություններից, վարում էր տնտեսական կարգի մի պաշտոն Զաքարյաններին պատկանող Անի քաղաքում. Հավանարար Հոնենցը եղել է հարկային վերակացու։ Միջոցներ կուտակելով՝ նա զբաղվում է առևտրով ու վաշխառությամբ և «գրավկնելով» շատ ազնվականների անշարժ գույքն ու կալվածները, դառնում է հսկայական հարստությունների տեր։ Բացի կուտակած մեծ գանձերից, նրան են պատկանել մի ընդարձակ թաղամաս Անիում՝ իր բոլոր շենքերով հանդերձ, բազմաթիվ իջևաններ, հյուրանոցներ, կուդպակներ, ձիթհաններ, ջրաղացներ, քարհատներ (քարհանք), ջրմուղի ցանցի մի մասը և մեծ քանակությամբ հողեր ու կալվածներ։

Անիի կոդքին գտնվող Հոռոմոս վանքի արձանագրություններից իմանում ենք, որ այս Տիգրան Հոնենցը 1201 թվականին դեռևս ոչ այլ ոք էր, քան «Տիգրան ծառայ... իմ պարոն Զաքարիայի», նրա տված նվերն էլ մի ջրաղաց է եղել[4]։ 1213 թվականին Խծկոնքի վանքի վոտ թողած արձանագրության մեջ Տիգրան Հոնենցի տիտղոսը նկատելիորեն ճոխանում է՝ նա իրեն կոչում է «հաւատարիմ ծառայ մանդատորթայ խուցէս ամիր սպասալար շահնշահ Զաքարիայի»։ Այժմ արդեն վերանորոգում է Խծկոնքի վանքը և նվիրում է նրան մի ակ գանձագին ձիթհան Անիում, մի այգի Մարմետում[5]։ Նույն 1213 թվականին երևի Զաքարիայի մահից հետո թողած արձանագրության մեջ, Տիգրան Հոնենցը Զաքարյաններին այլևս չի հիշատակում և իրեն կոչում է միայն ծառայ Քրիստոսի։ Նա վերանորոգում է Անիի մայր տաճարի սանդուղքները և տաճարին նվիրում իր գանձագին կուդպակը, «որ ի կատանոցին է», երկու տոնական, և երկու արծաթե սկիհ։ Խոսելու տոնն էլ հրամայական է, հդփացած. նա չի ասում, թե եկեղեցու սպասավորները խոստացան ինձ պատարագել, ինչպես սովորաբար գրվում է արձանագրություններում, այլ փորագրել է տալիս, «ես եդի լուծ ի վերայ սպասաւորաց սոցա (մայր տաճարի) ի տարին... պատարագել յանուն իմ մինչ ի գալուստն Քրիստոսի»[6]։ Մինչ այդ նման ոճով արձանագրություններ Անիում թողել էն Պահլավունի իշխանները։

1215 թվականին Հոնենցը արդեն կառուցում է Անիի գեղեցկագույն տաճարներից մեկը և նրա պատին թողնում մի շատ ընդարձակ արձանագրություն, որը լավագույն կերպով է բնութագրում այս մեծատան կերպարը, նրա հարստությունները և սրանց աղբյուրները, ուստի այդ արձանագրությունը կբերենք ամբողջությամբ։

---

1 «Այրարատ», էջ 67։
2 Գարեգին Ա. կաթողիկոս, Ցիշատակարան, էջ 752։
3 Նույն տեղում, էջ 793։
4 Ալիշան, Շիրակ, էջ 22։
5 Նույն տեղում, էջ 129։
6 Նույն տեղում, էջ 72։

«Թվ. ՈԿԴ. Շնորհիւն և ողորմութեամբն աստուծոյ յորժամ տիրեց քաղաքիս Անոյ հզաւր և տիեզերակալ ամիր սպասալար և մանդատուրթա խուցն Զարարիայ և որդին նորա Շահնշահ ես Տիգրան ծառայ աստուծոյ որդի Սրմբատաւրենց Սուլիմա, յազգէ Հոնենց վասն երկար կենդանութեան տերանց իմոց և յորդոց նոցա շինեցի զվանքս սուրբ Գրիգորոյ, որ ի հին մատրան Աստուածածին կոչիւր, որ էր քաղաքն և մացառ տեղի ակտ (՝), զոր իմ հալալ դանձով գնեցի ի հերէնէտիրաց և բազում աշխատութեամբ և դանձով պարսպեցի շուրջանակի. շինեցի զեկեղեցիս յանուն սրբոյն Լուսաւորչին Գրիգորի և զարդարեցի բազում զարգիւք փրկական նշանաւք սուրբ խաչիւ ոսկիք և արծաթիք և պատկերագործ խատերով զարդարեալ ոսկով և արծաթով և ակամբք և մարգարտաւ և կանթեղաւք ոսկի արծաթի և նշխարաւք սրբոց առաքելոց մարտիրոսաց և մասամբ աստուածընկալ և տէրունական խաչին և ամենայն ցեղ սպասք յոսկոյ և արծաթոյ և բազում զարդաւք շինեցի զամենայն ցեղ զբնակարան վանականաց և իշխանաց և կարգեցի ի սմայ քահանայք պատարագողք մարմնոյ և արենն Քրիստոսի, որ անխափան պատարագ մատչի վասն արևշատութեան տէրանց իմոց Շահնշահի և որդոց իւրոց և վասն թողութեան մեղաց իմոց. և նոցու ընձայս ի վանքս սուրբ Գրիգորոյ հայրենիք զոր գնել էի դանձով և վճռամբ հայրենէտիրաց և զոր ես ի հիմնէ շինել էի զայսոսիկ. Գաւառխոննց գեղին կէսն և քարհտին Ե դանկն, Մշակունեց կէսն, Կապղուցն կէսն, Ցամաքծովն բոլոր, Խուզած Մահմունդ ի Կարուց երկիրն ու Ցընդոյ Բ դանգն, Խաչորկանն, և փնդուկն ի քաղաքիս, հայրենիք բաղնիսն ու միլն ի մոդանիս, խանապարն կուղպակնով ու կամարակապ փնդուկն ու մարագն, հետ բաղնեցն տէր Սարգսի ախոռն ու մարագն զոր գնեցի, կալն և Բ ակն ձիթհանք և ախոռնի ու մարագնի վանիցս ի դռանս վանիցս առջեւ պահէզն ու լանջն ինչուրվի Գլիձորի դուռն, ինչվի գետն ու գետեզերն պահէզն զոր գնել էին և շինել Դվնա դռանն, կէս ակն ջաղաց, թարփ մի բոլոր և մին այլ թարփին շաբ Բ աւր, Գլիձորին ջաղաց Ա, թարփն շաբ, Բ աւր ի Բեշքենակապէն ինչուրվի կարմունջն գետին կէսն իմ գնածէն։ Պապենց խանաբարն Դ դանգն ու դռան կուղպակն, բոլոր տներ Հատէցոնց զուկակի քաղաքիս դռանս բազում հողեր գնած. այգի Ա յԵրևան, այգի Ա յՕշական, այգի Ա Կոշ, էգի Ա յԱրուճ, որ Սազոտն կոչի, այգի Ա ի Մրեն, այգի Ա ի Ծմակին, որ կաթողի հող կոչի. զայս որ գնած է. և այլ բազում գրաւկնած էր, զոր ոչ արձանագրեցի վանացս էի տվել ու թէ տէրքն թափեն ոսկին վանացս, զոր ուրիշ իմ անդարձագրին եմ գրել. և զվանքն Բեխենց կոչեցեալ զոր ես շինեցի և նորոգեցի ընծայաւք փարթամացուցի ամէնովն. սուրբ Գրիգորոյ վանացս հոգացողս հոգայ զորպիսութիւն...»[1]։

Այնուհետև գալիս է անեծքի ֆորմուլան, որն այս երկարաշունչ արձանագրության մեջ նույնպես երկար է։ Ո՞րպիսի խոշոր հարստությունների տեր պիտի լիներ Տիգրան Հոնենցը, որ կարողանար մի վանքի նվիրել այս արձանագրության մեջ հիշատակված շարժական և անշարժ գույքը, արտադրական հաստատություններն ու հողերը։

Տիգրան Հոնենցի պես մեծատունների թիվը XIII դարի սկզբներին փոքր էր։ Ավելի շատ էին միջին կարողության տեր մեծատունները, որոնք իրենց նվիրատվական արձանագրությունների մեջ հիշատակում են եկեղեցիներին տված նվերները։ Բագարանի Վարդ ռայիսը, օրինակ, 1224 թ. մի այգի է նվիրել նույն

[1] Ալիշան, Շիրակ, էջ 75—77։

գյուղաքաղաքի եկեղեցուն[1], ոմն Սուկատի որդի Կաղերը 1231 թ. Հոռոմոսի վանքին նվիրել է Անիում գտնվող իր երկու տները[2], կամ Խոսրովի զուգակից Շուշիկը նույն տարին նույն վանքին նվիրել է դարձյալ Անիում գտնվող իր տները[3]։

Այս նոր խավի մարդիկ տոհմական ծագում, հետևարար և տոհմական անուն կամ ազգանուն չունեին, և եթե ավելի հին դարերում անաղատների դասին պատկանող մարդկանց «ազգանունները» կազմվում էին նրանց ծննդավայրի անունով, օրինակ՝ Ղազար Փարպեցի, Մովսես Խորենացի, Անանիա Շիրակացի և այլն, ապա ֆեոդալական քաղաքների բնակչության համար բնորոշ է ազգանվան կազմելը հոր կամ պապի անունով, զբաղմունքի տեսակով կամ անձնական հատկանիշների համեմատ։ Ահա մի օրինակ. «ՈՁԲ (1233)... ես Վահրամ որդի Մխիթարս, թոռն Աւէտեացն Զէչկանց և զիւզակից իմ Փառանցանս... Եռու զիմ դանձագին կուզպակն ի փողոցկտերն (փողոցի վրա գտնվող շենքի երկրորդ հարկում), որ ի Թորոսոնց կուզպակին վերա է, և զայն տուն, որ Սեքթենց հմնակից է և ի վերայն կուզպակն իմ...»[4]։

Շարունակենք մեծատուններին վերաբերող տեղեկությունները։

Ոմն Վարդի որդի Խաչերեսը 1233 թ. Անիի իր տները կտակել է Բագնայրի վանքին[5]։ Միջին կարողության մեծատուն է նույնպես Օտար Կողբեցին, որը իր կնոջ՝ Սեղայի հետ միասին 1235 թ. Բաղնայրի վանքին նվիրել է Կողբում ունեցած աղահանքի կեսը[6]։

Վերևում հիշատակված Աբրահամ Լոռեցու որդի Խաչերեսը Բագնայրին նվիրել է 7 կուզպակ և 3 տուն, իսկ նրա դուստր Մամխաթունը նույն վանքին նվիրել է իր կուզպակը, «որ ի փողոցկտերն է ի բաղգնոց»[7]։

Այս նույն Խաչերեսի կինը իր վրա է վերցրել Անիի պարսպի բուրգերից մեկի շինարարության ծախքը[8]։ Մոր օրինակին հետևել է և Մամխաթունը, որը հոգացել է ևս մեկ բուրգի կառուցման ծախքերը[9]։ Հոր՝ Աբրահամի, որդու՝ Խաչերեսի և սրա դստեր՝ Մամխաթունի գործերի մասին պատմող արձանագրությունները ցույց են տալիս, որ խոսքը վերաբերում է բավականաչափ ունևոր մեծատունների մի տոհմի, որի գոյությունը երկար է տևել։

1235 թ. Անիի կաթուղիկեին ավետարան, շուրջառ և վառ (զրոշ) է նվիրել Կարբցի (Կարսեցի) Զուհալը[10], որը հավանաբար վաճառական էր և այցելել էր Անի։

Անիի մեծատունների թվում աչքի ընկնող դեր են կատարել նաև զինվորականները։ Ահա զրանցից մեկի Հոռոմոսում թողած արձանագրությունը. «Զաւրութեամբն աստուծոյ ես Շերանիկս զաւրացա ի զինուորութեան... Եռու զիմ դանձագին այգին ի Ծմակին... ես Մարիամ զուգակից Շերանկանն Եռու ի սբ. Յովհաննէս զԱկնաց կէս դանդն իմ դանձով գնած»[11]։

---

1 «Վիմական տարեգիր», էջ 68։
2 Նույն տեղում, էջ 71։
3 Նույն տեղում.
4 Նույն տեղում, էջ 77։
5 Նույն տեղում։
6 Ալիշան, Այրարատ, էջ 68։
7 «Վիմական տարեգիր», էջ 49։
8 Նույն տեղում, էջ 61։
9 Նույն տեղում, էջ 62։
10 Նույն տեղում, էջ 79։
11 Նույն տեղում, էջ 240։

Թերևս Շերանիկը Զաքարյանների նշանակած զորավարներից մեկն էր, որի պատկերը գտնում ենք XIII դարի մի ձեռագրի լուսանցքում, զինվորական կգեստով, ուսին դրած ձողից կախված ձկնով ու համապատասխան մակագրությամբ։ 1222 թ. Շերանիկը ինչ-ինչ պատճառներով բանտարկված է եղել Մաղասբերդի բանտում։

Շատ խոշոր հարստությունների տեր մեծատուն էր Ումեկը։ Սա մանաղկերտցի էր, Ճար անունով մեկի որդին, առևտրական և վաշխառուական լայն գործունեություն էր ծավալել Կարինում, որտեղից նրան մոնղոլական Բաչու զորավարը փոխադրեց արևելք։ Կիրակոս Գանձակեցին պատմում է, թե մոնղոլները կողոպտում և ավերում էին երկիրը. Կարնո քաղաքի ավերման ժամանակ Ումեկը, որը էր «այր մեծատուն վաճառական մեծարեցաւ ի նոցանէ»... Սա «առատ տուր ետ Արղունին և որ ընդ նմա և մեծարեցաւ յոյժ ի նոցունց»[1]։ Տեղափոխվելով արևելք, Ումեկը բնակություն հաստատեց Տփղիսում և մեծ գումարով, այն է 40000 դուկատով գնեց Գետիկը[2]։

Ումեկի որդին էր Ճարը, որը 1283 թ. Նոր-Գետիկ վանքին նվիրել է 4000 դուկատով գնած Յովս գյուղը, նշելով, որ այդ գառն ժամանակներում «հայրենիքն արժան էր և ոսկին թանկ»[3]։

Տիգրան Հոնենցի և Ումեկի նման խոշոր հարստություններ կուտակած մեծատուն էր նաև Ավետենց Սահմադինը։ Ինչպես երևում է Անիում Սահմադիսի թողած արձանագրություններից, նա եղել է այս քաղաքի հարկային վերակացուներից մեկը։ 1261 թ. Սահմադինը Շահնշահի որդի Արտաշիրից գնել է Նախկինում թագավորական Մրեն գյուղաքաղաքը և այստեղ կառուցել է մի պալատ, որի վրա ծախսել է խՌ (40000) դուկատ դահեկան։ Պալատը գտնվել է «Արքայութիւն» կոչվող պարտեզի մեջ։ Նա գնել է նաև Մրենի շրջակայքի այգիները «զամեն մէկ յիւր տիրոչէն»[4]։

Լինելով մոնղոլական արքունիքը մուծվող հարկերի կապալառուներից մեկը, Սահմադինը բնակչությանը հարստահարելով հսկայական միջոցների տեր էր դարձել։ 1263 թ. մի արձանագրությունից երևում է, որ նա Սահիբ-Դիվան Շեմսէդդինի և իր նման հարկահան կապալառու Քարիմադինի հետ միասին Շահնշահի որդիներից գնելով Անին, դարձել էր նրա տեր պատրոնների մեկը[5]։ Իսկ մի տարի անց, 1264 թ. գնել է Երևան քաղաքը իր հողով ու ջրով և դարձրել այն իր հայրենիքը[6], որի առթիվ արձանագրություն է փորագրված Երևանի հին հուշարձաններից մեկի վրա։

---

[1] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 349—350։

[2] «Վիմական տարեգիր», էջ 121—125։

[3] Նույն տեղում, էջ 124—125։

[4] Н. Я. Марр. Ани, Ереван, 1939, стр. 79.

[5] «Վիմական տարեգիր», էջ 106։

[6] Երևան քաղաքի գնմանը վերաբերող արձանագրության և այդ կապակցությամբ Սահմադինի մասին տե՛ս Կ. Ղաֆադարյան, Երևանի կաթողիկեի և Նորահայտ հուշարձանի արձանագրությունները. «Տեղեկագիր ՀՍՍՀ Պատմության և գրականության ինստիտուտի», 1938, № 1, էջ 165 և հտ., Ա. Բարխուդարյան, Մի քանի դիտողություններ Երևանի կաթողիկե եկեղեցու արձանագրությունների վերաբերյալ («Տեղեկագիր», 1947, № 5, էջ 71—72)։ Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 208—210։

1273 թ. թողած մի արձանագրության մեջ ասվում է, որ Սահմադինը վերացրել է Արջո-ատիճի, Մրենի և Օշականի այգիներից գանձվող հարկը։ Նա հիշյալ վայրերի այգիները ազատել է «ի խալալ (պետք է լինի՝ խալալէ) և յերկրորդ հարկէ»[1]։

Սահմադինի հրամանով Ստեփանոս ձեռնավորը և Վահրամ քեթոբարը 1286 թ. վերացրել են Օշականի երեցների վճարելիք հարկերը, այն է՝ «այգւոյ, բամբակի... և ժամհարին» հարկերը[2]։ 1288 թ. Սահմադինը վերացրել է Օշականի հացի և դարմանի շարիատը[3]։ Նույն թվականին Մրենում թողած արձանագրության մեջ ասում է, որ առաջ վերացրել է «Մրենի հացին շարիատն», իսկ այժմ՝ «զէգեց գինոյ և խաղողի խալէն»[4]։

Սահմադինը ձեռք էր բերել մեծամեծ կալվածներ նաև Քաջբերունյաց գավառում և դարձել էր գավառի կենտրոն Արճեշ քաղաքի փաստական տերը, որ երևում է 1291 թ. Արճեշում թողած մի արձանագրությունից[5]։ Այսպիսով, այս մեծատունը տեր էր դարձել Մրեն գյուղաքաղաքին, Անիի մի մասին, Երևան քաղաքին, Արջո-ատիճ և Օշական ավաններին և Արճեշ քաղաքին։ Թե ո՞վ էր Սահմադինը, պարզվում է իր իսկ թողած արձանագրությունից։ Նրա տոհմական ձյուղագրությունը մեծ չի, հոր անունն է Ավետիք, ինքը պարոն է կոչված, իսկ հայրը քիչ թե շատ հայտնի քաղաքացի է եղել, քանի որ նրանից է սկսվում այդ տոհմի անունը։ Սահմադինի թոռ Բեսութան նույնպես պարոն է եղել և 1295 թ. վերացրել է Օշականի ու նրա վանքերի «դեսարա» կոչվող հարկը[6]։

Տիգրան Հոնենցը, պարոն Ումեկը, Սահմադինը և ուրիշները Հայաստանում, համեմատաբար փոքր չափերով և նեղ շրջանակներում, դրսևորում էին ամբողջ Մերձավոր Արևելքում տեղի ունեցող այն երևույթը, որի էությունն էր առևտրական, վաշխառուական տարրերի, ինչպես և տնտեսական, հարկային, վարչական, ռազմական և այլ պաշտոնեության վերնախավի բարձրացումը հարստության և փառքի սանդուղքներով, նրանց հղփացումը և ի վերջո կալվածատեր դառնալը՝ ֆեոդալականացումը։ Նույն երևույթի մարմնացումը, ավելի խոշոր չափերով և ընդարձակ շրջանակներում, ցայտուն կերպով երևան է գալիս Իրանի «բազմահնար խոջա» Շամս-ադ-դին Մուհամմեդ Ջուվեյնիին՝ մոնղոլական իլխանության ֆինանսական վարչության գագաթը մագլցած այս Սահիբ-Դիվանին վերաբերող մատենագրական և արձանագրական տեղեկությունների մեջ։

Սահմադինի կարգի կամ նրանից փոքր ինչ պակաս կարողության տեր հարուստներ էին Ուքան Քարիմադինը և Պապքան Ֆահրադինը, որոնք նույնպես

[1] «Վիմական տարեգիրք», էջ 116, 126։
[2] Նույն տեղում, էջ 129։
[3] Նույն տեղում, էջ 130։
[4] Նույն տեղում։
[5] Նույն տեղում, էջ 133։
[6] Նույն տեղում, էջ 137։
[7] Սահիբ Դիվան Շամս-ադ-դին Մուհամմեդ Ջուվեյնիի հիշտ և ծավալուն բնութագիրը տե՛ս Հ. Գ. Ժամկոչյանի «Անի քաղաքի 13-րդ դարի երկու արձանագրությունների մասին» հոդվածում, տպված Երևանի Պետական համալսարանի «Գիտական աշխատություններ»-ի 47-րդ հատորում, 1955, էջ 89—116, մանավանդ Աշոտ Հովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» աշխատության առաջին գրքում, Երևան, 1957, էջ 211—216։

Անիի հարկային տեսուչներից էին։ Սրանք մեծ դանձեր, տներ և հյուրանոց ունեին Անիում, իրենց միջոցներով գնել և հիմնովին վերաշինել են Անիից երկու կմ. հյուսիս-արևելք գտնվող Կարմիր վանքը, որը աչքի ընկնող կոթող է, կանգնեցրել են մի եկեղեցու զանգակատուն Անիում, նվերներ են տվել Հոռոմոսի վանքին։ Այս պարոնների անունով մնում են նաև ուրիշ նվիրատվական արձանագրություններ 1252, 1268, 1270 և 1274 թվականներից[1]։

Անեցի խոշոր մեծատուններից էին Գրիգոր և Վահրամ հեջուբները, պարոն Սարգիսը, որի շքեղ տունը բացվել է պեղումների ժամանակ, և շատ ուրիշներ։

Մեծատունների ցանկը շարունակելու հարկ չկա։ Բերված փաստերն էլ պերճախոս կերպով ցույց են տալիս, որ նրանք ազնվական ծագում չունեին, այլ հարստություններ էին կուտակում առևտրի, վաշխառության և զանազան պաշտոններ վարելու միջոցով։

Եկամտաբեր էին մանավանդ հարկահանության, ֆեոդալների տիրույթների տնօրինման, նրանց կալվածների կառավարման, քաղաքային շուկաների վերահսկողության, ինչպես և վարչական, դատական ու զինվորական պաշտոնները։ Վերևում բերված փաստերն էլ ցույց են տալիս, որ մեծատունների թվում, բացի վաճառականներից, եղել են հարկահաններ (տամղատարներ, բաժրարներ և այլն), խոշոր ֆեոդալների ենթակա զինվորականներ, հեջուրներ, ձեռնավորներ (ֆեոդալական տիրույթների ու կալվածների տնօրեններ ու վերահսկիչներ), քաղաքների պարոններ, դատավորներ ու մուհթասիբներ, քաղաքների ու գյուղաքաղաքների, ավանների տանուտերեր և այլ պաշտոնյաներ։

Մի ձեռագրում պարոնությունը դիտված է ոչ թե իբրև ժառանգական երևույթ, ինչպիսին ազնվական կոչումն է, այլ իբրև ձեռք բերովի բան, իսկ ձեռնավորությունը ստորադաս է համարվում, քան պարոնությունը[2]։

Մեծատուն տերմինը ապրյուրներում գործածված է այնպիսի կապակցությունների մեջ, որ ցույց է տալիս այս խավի մարդկանց ոչ միայն վաճառական, այլև պաշտոնյա, ոչ միայն փողատեր, այլև հողատեր, կալվածատեր լինելը։

Նշելով, որ թոնդրակյանները նախանձելի ոչինչ չունեն, Գրիգոր Մագիստրոսը ասում է՝ նրանց ինչին պետք է նախանձել, «եթէ ըստ հայրենեաց սեփականագոյն ազնուականութեան, եթէ գանձի՞ւք հզփացեալ» են։ Այստեղ տոհմիկ կալվածատեր ազնվականներից հետո հիշատակվում են մեծատունները, որոնք գանձերով հզփացածներ են։ Ֆրիկը ևս մեծատան մասին գրում է.

Քան զմեծատունն այլ ո՞վ հարուստ
Անչափ ունէր ակն ու գոհար,
Կապայ հաղնէր ցեղք ի ցեղաց,
Փողպատն ամեն մարգարտաշար։

Ուրեմն մեծատունը հանդես է գալիս որպես գանձերի տեր։

---

[1] Н. Я. Марр, Ани, стр. 189—190, տե՛ս նաև Գարեգին Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ, պրակ Ա, էջ 13—14։

[2] Մատենադարան, ձեռագիր № 693։

[3] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 136։

[4] Ֆրիկ. Բանաստեղծություններ, 1941, էջ 177։

Բայց ահա նույն Ֆրիկը հետևյալ կերպ է բնութագրում մեծատուններին.

Նոքա որ զկաշառքն առին
Ու շատ վաշխ ու մեծ տոկոսին...[1]։

Այստեղ արդեն գանձատեր, վաշխառու լինելուց զատ մեծատունը միաժամանակ կաշառառու է, իսկ այդ կարող էր անել պաշտոնյան։ Ուրեմն մեծատունը միաժամանակ խոշոր պաշտոնյա է։

Սակայն փողատեր մեծատունը նաև կալվածատեր հողատեր է դառնում։ Այգեկցու առակներից մեկում ասվում է՝ «մեծատուն մի խիստ փարթամ... ունէր շատ ոսկի և արծաթ և շատ դեղորայք, և ագարակ և շատ մլքեր ջաղացնի և այլ շատ մլքեր»։

Մի ձեռագրի մեջ ոմն Գրիգորիսի «Թուխտ վասն մխիթարութեան աղքատաց» գրվածքում ասվում է. «Եթե ընդ պտուղս կալոյ և հնձանի մեծատանն նախանձեցիս...»[2]։

Այսպիսով, բազմաթիվ մեծատունների վերաբերյալ հականե հանվանե եղած փաստերը և ընդհանրապես մատենագրական վկայությունները ցույց են տալիս, որ նրանք փողատերեր էին, հողատերեր, վաճառականներ, վաշխառուներ, պաշտոնյաներ ու ֆեոդալներ, և միաժամանակ ֆեոդալական հիերարխիայի մեջ գրավում էին երրորդ տեղը, աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալներից հետո։

Սակայն նման բնութագիր և տեղ նրանք ստացել էին XII—XIII դարերում։ Սկզբնապես նրանք հաճախ սոսկ փողատեր էին կամ պաշտոնյա, հետագայում միայն ձեռք բերեցին հողեր ու կալվածներ և դարձան փողատեր-հողատեր մեծատուններ, որոնք արդեն նոր տիպի ֆեոդալներ էին։ Մի հեղինակի ասելով՝ «մեծատունք զայնք կամին որ ամենեցուն հաղթեն, և քան զամենեսեան երևելի լինեն»[3]։ Բայց տոհմիկ ազնվականության շահերի արտահայտիչ հեղինակը ավելացնում է, որ մեծատունները չեն կարող ամենքին հաղթել և ամենքից երևելի լինել։

Ն. Յա. Մառը Հոնենցին և նրա տիպի մեծատուններին համարում էր կապիտալիստներ, իսկ պրոֆ. Վ. Ջալոյանը մեծատունների խավի գոյացումը և միջոցների կուտակումը նրա ձեռքին դիտում է իբրև կապիտալի նախնական կուտակման երևույթ։

Ֆեոդալական հասարակության մեջ, այն էլ X—XIII դարերում գոյացած առևտրականներին ու վաշխառուներին կապիտալիստներ հռչակելը զուրկ է հիմքից։ Առանց վարձու աշխատանքի շահագործման սիստեմի, առանց հավելյալ արժեքի համար կատարվող ապրանքային արտադրության առկայության կապիտալիստներ չեն լինում։ Ֆեոդալիզմի հիմքը կազմում էր հողի ֆեոդալական սեփականությունը։ Ուստի բնորոշ է, որ փողատեր մեծատունները սովորաբար ձեռք էին բերում այգիներ, հողեր, կալվածներ և դառնում էին ֆեոդալ հողատերեր։

Մեծատունների ձեռքին կուտակվող դրամական հարստությունները X—XIII դարերում երբեք էլ կապիտալիստական շահագործման, այսինքն՝ վարձու

---

[1] Ֆրիկ. Բանաստեղծություններ, էջ 129։

[2] Մատենադարանի ձեռագիր № 8030, էջ 398ա։

[3] Մատենադարանի ձեռագիր № 8029, էջ 157ա («Անանիայի վարդապետի հոգեշահ բան»)։

աշխատանքի շահագործման և հավելյալ արժեքի արտադրության միջոց չէին դառնում։ Այստեղ խոսքը, իհարկե, վարձու աշխատանքի պատահական կիրառմանը չի վերաբերում։

Կարլ Մարքսը գրում է. «Հողն ու ապրանքը, ինչպես և արտադրության միջոցներն ու կենսամիջոցները, ինքնին ամենևին էլ կապիտալ չեն։ Նրանք պետք է կապիտալի փոխարկվեն։ Բայց այդ փոխակերպությունը հնարավոր է միմիայն որոշ պայմաններում, որոնք հանգում են հետևյալին. երկու շատ տարբեր, հակադիր տեսակի ապրանքատերեր պետք է իրար հանդիպեն և շփման մեջ մտնեն—մի կողմից՝ փողի, արտադրության միջոցների ու կենսամիջոցների սեփականատերը, որը կարիք ունի աշխատուժ գնելու իր յուրացրած արժեքի գումարը ավելացնելու համար, մյուս կողմից՝ ազատ բանվորները, իրենց սեփական աշխատուժը ծախողները և, հետևապես, աշխատանք վաճառողները»[1]։ Նշելով, որ վերջիններս ունեզրկվելով ազատ են և զուրկ, մանավանդ, իրենց արտադրամիջոցներից, Կարլ Մարքսը շարունակում է. «Այսպիսով, կապիտալիստական հարաբերություն ստեղծող պրոցեսը ուրիշ բան չի կարող լինել, բայց եթե բանվորին իր աշխատանքի պայմանների սեփականությունից անջատելու պրոցես,— մի պրոցես, որը, մի կողմից, հասարակական արտադրության միջոցները և կենսամիջոցները դարձնում է կապիտալ, մյուս կողմից, անմիջական արտադրողներին դարձնում է վարձու բանվորներ։ Հետևաբար, այսպես կոչված նախասկզբնական կուտակումը ոչ այլ ինչ է, եթե ոչ արտադրողին արտադրության միջոցներից անջատելու պատմական պրոցես»[2]։

IX—XIII դարերի Հայաստանում նման երևույթների մասին խոսելն ավելորդ է։ Կոպիտ սխալ կլիներ նաև առևտրական և վաշխառուական կապիտալի ամեն մի աճը նույնացնել կապիտալի նախնական կուտակման հետ։ Այդպես վարվել են բուրժուական պատմաբաններն ու տնտեսագետները, օրինակ՝ Զոմբարդը, որի կարծիքով կապիտալի նախնական կուտակումը ոչ այլ ինչ է, քան դրամական քիչ թե շատ խոշոր գումարների կենտրոնացումը առանձին մարդկանց ձեռքին։

Իհարկե, առևտրական կապիտալի առկայությունն ու մինչև որոշ աստիճանի զարգացումը, ինչպես նշում է Կ. Մարքսը, հանդիսանում է կապիտալիստական արտադրական եղանակի զարգացման պատմական նախադրյալ, քանի որ նա ծառայում է իբրև նախապայման դրամական ունեցվածքի կենտրոնացման համար, իսկ կապիտալիստական արտադրությունը ենթադրում է արտադրություն վաճառքի և փոխանակային արժեքի համար[3]։ Սակայն այդպիսի նախադրյալ առևտրական կապիտալը դառնում է կապիտալի նախնական կուտակման և կապիտալիստական արտադրական հարաբերությունների սաղմնավորման ժամանակաշրջանում։ Իսկ ֆեոդալական հասարակության վերելքի ժամանակաշրջանում պարզ ապրանքային արտադրության և առևտրի զարգացումը մինչև որոշ աստիճանի հասնելը, նպաստելով ֆեոդալի ստանալիք հավելյալ արդյունքի աճին, սպասարկում էր ֆեոդալական հասարակությանը և օգնում նրա առաջընթացին։

[1] Կ. Մարքս. Կապիտալ, հ. 1, Երևան, 1934, էջ 747։
[2] Նույն տեղում։
[3] Կ. Մարքս. Կապիտալ, երրորդ հատոր, առաջին մաս, Երևան, 1947, էջ 312։

Բ. ՔԱՂԱՔԻ ՍՏՈՐԻՆ ԽԱՎԵՐԸ

Քաղաքների բնակչության հիմնական զանգվածը կազմում էին ստորին խավերը, կամ ռամիկների դասը։ «Բազմութիւն ռամկին որ ի քաղաքին Տրապիզոն ռամիկ և բամբ»[1]։ Ն. Շնորհալին էլ իրավս ասում է թե քաղաքի վաճառականները խարում են «զռամիկսն և զանդիտսն»[2]։

Խոշոր, միջին, թե փոքր քաղաքներում ու գյուղաքաղաքներում բնակվում էին մեծ թվով քաղաքացիներ, որոնց հիմնական զբաղմունքը հողագործությունն էր քաղաքում և նրա մերձակայքում դանվող արտերի, այգիների, մրգաստանների ու պարտեզների մշակությունը։

Միջնադարյան քաղաքների համար բնորոշ էր այն, որ հողագործությամբ պարապող բնակչությունը գերակշռում էր գյուղաքաղաքներում ու մանր քաղաքներում և զգալի թիվ էր կազմում միջին, անգամ մեծ քաղաքներում։

Խոշոր քաղաքներում գերակշռում էր բնակչության արհեստավորական և առևտրական խավը։ Դա, իհարկե, միապաղաղ զանգված չէր, ընդհակառակը, ունեցվածքային նկատելի շերտավորման էր ենթարկված։

Առևտրականների մի մասը զանազան միջոցներով հարստություն կուտակելով աստիճանաբար ստվարացնում էր քաղաքային վերնախավի կամ մեծատունների շարքերը։ Ավելի ստվարաթիվ էր մանր առևտրականների շերտը, որը քաղաքների շուկաներում մանրածախ առևտրով էր զբաղվում։ Սրանք ձգտում էին իրենց ձեռքը ձգել ամենից առաջ սննդամթերքի, մրգեղենի, խմիչքների, երկրագործությունից և անասնապահությունից ստացվող այլ մթերքների, այլև քաղաքի արհեստագործական արտադրանքի մի մասի մանրածախ առևտուրը։

Կային նաև շրջիկ առևտրականներ՝ փերեզակներ, որոնք վաճառում էին քաղաքում ձեռք բերած զանազան մանր իրերն ու առարկաները, շրջելով ավանները, բերդերն ու գյուղերը։

Քաղաքի հիմնական արտադրողները արհեստավորներն էին։ Երկրի արտադրողական ուժերի աճի, հողագործությունից արհեստագործության անջատման և քաղաքներում կենտրոնանալու, արհեստագործության նորանոր ճյուղերի և մասնագիտությունների առաջացման շնորհիվ արհեստավոր բնակչության թիվը քաղաքներում IX—XIII դարերում բազմանում էր գյուղից քաղաք եկող արհեստավորների հաշվին։ Ճիշտ է, այդ աճը տարբեր ժամանակներում և տարբեր քաղաքներում հավասարաչափ չէր լինում, սակայն սելջուկյան տիրապետության ընդմիջումով հանդերձ, այն տեղի էր ունենում շարունակաբար մինչև մոնղոլական տիրապետության հաստատումը։

Արհեստագործության զարգացումը խոշոր չափով նպաստեց ֆեոդալական հասարակության արտադրողական ուժերի աճին և աշխատանքի բաժանման խորացմանը։ Քաղաքներում առաջ էին եկել 100-ից ավելի արհեստ և արհեստային մասնաճյուղ, որոնք երկրի ներքին շուկայում սպասարկում էին հասարակական բոլոր խավերի պահանջարկը տնտեսական, կենցաղային և կուլտուրական բնագավառներում, և որոշ քանակությամբ ապրանքներ էլ արտադրում էին երկրից դուրս արտահանելու համար։ Դրան համապատասխան աճում և ստվարանում էր քաղաքային արհեստավորության թիվը։

[1] Բայսմաւուրք մարտի Բ։ Տե՛ս նաև մարտի Զ։
[2] Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, էջ 107։

Քաղաքային արհեստավորության մեջ խորանում էին ունեցվածքային տարբերությունները։ Բացի այն հիմնական անջրպետից, որը գոյություն ուներ վարպետների, վարպետացուների և աշակերտների միջև, ինչքային տարբերություններ առաջանում և խորանում էին նաև արհեստային այլևայլ ճյուղերով զբաղվող, անգամ նույն ճյուղում զբաղվող վարպետների միջև։

Արհեստավորների ամենահիմնական և աչքի ընկնող տարբերությունն այն էր, որ նրանց մի մասը քաղաքներում ուներ սեփական արհեստանոց-կուղպակ, իսկ մյուս մասը զուրկ էր դրանից։ Արհեստանոց-կուղպակ չունեցող արհեստավորները վարձում էին այն կուղպակները, որոնք, օրինակ, Անիի արձանագրությունների մեջ այնքան հաճախ հիշատակված են իբրև ֆեոդալների, վանքերի, մեծատունների սեփականություն[1]։ Հավանորեն կային և արհեստավորներ, որոնք զուրկ էին կուղպակ-արհեստանոց վարձակալելու հնարավորությունից և ստիպված էին աշխատել ուրիշի արհեստանոցում, ոչ հավասար պայմաններով։

Գույքային տարբերությունների առկայությունը արհեստավորների միջև իր արտահայտությունը գտել է որոշ վիմական արձանագրությունների և ձեռագրերի հիշատակարանների մեջ։

Արհեստավորները արտադրում էին սպառողների պատվերով և կամ շուկայի համար։ Վերջին դեպքերում նրանք, իբրև մասնր արտադրողներ իրեր ու առարկաներ էին պատրաստում սեփական նյութից և պատրաստի արտադրանքը վաճառելով շուկայում, հոգում էին իրենց ապրուստը։ Արտադրողը միաժամանակ վաճառող էր, և արհեստավորական շարքերը կազմում էին շուկայի բաղկացուցիչ մասը, իսկ արհեստավորի կուղպակը և՛ արհեստանոց էր, և՛ վաճառքի վայր։ Քաղաքային կյանքի զարգացմանը համընթաց արհեստավորը ավելի ու ավելի շատ էր արտադրում շուկայի համար։

Այն դեպքում, երբ արհեստավորը աշխատում էր անմիջական սպառողների պատվերով (իր արհեստանոցում, թե այլ տեղում միևնույն է), նա ստանում էր հատուցում կամ վարձ։ Այս տեսակետից շատ բնորոշ է Մխիթար Հոշի Դատաստանագրքի երկրորդ մասի 124-րդ հոդվածը, որտեղ ասված է. «Արուեստաւորը ամենայն ըստ որում եւ իցեն արուեստի, եթէ հատուածով գործիցեն և եթէ վարձով, յորժամ ոչ ըստ հաճոյից տեառն գործիցին, այլ և զնիւթն ապականիցին, դատաստանաւ է ըստ հաճոյից նոցա առնել դարձեալ, կամ զապականեալն ի գնոյն ըստ արժանւոյն լնուլ և ապա լիով հասանեն վարձու։ Ապա թէ ոչ—պակասեալ ի վարձէ ըստ արժանւոյն որպէս տեսանեն դատաւորք արասցեն»[2]։ Այս հոդվածի երկրորդ մասը պարզ է՝ արհեստավորը պարտավոր է գործը կատարել պատվիրատուի պահանջին համապատասխան, և փչացրած նյութի համար հատուցելուց հետո միայն լրիվ կարող է ստանալ վարձը։ «Արուեստաւորք ամենայն... եթէ հատուածով գործիցեն և եթէ վարձով...» սխալ է հասկացվել և թարգմանվել է «Мастера... будут ли они работать сдельно или по най-

[1] Կուղպակները վարձով տալու վերաբերյալ շատ արժեքավոր վկայություն գտնում ենք Կիրակոս Գանձակեցու մոտ։ Խոսելով արքիշեցի Ատուածատուր վարդապետի մասին պատմիչը ասում է «Էր սա որդի մեծատան... եւ իբրև հայրն վախճանեցաւ, առեալ զինչսն՝ բաշխեաց կարոտելոց։ Եւ կուղպակք էին նորա բազումք, զայն ետ ի վարձու, և յամենայն ամի առեալ զգինսն գնէր նոքոր մորթս ոչխարանց և կտաւս... և տայր աղքատաց»։ (Կիրակոս Գանձակեցի. Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1902, էջ 173)։

[2] Մխիթար Հոշ. Դատաստանագիրք, էջ 436։

ԿՅ...»[1] կամ մեկնարանվել է՝ արհեստավորներն աշխատում էին թե՛ «հատավարձով», և թե՛ «վարձով»[2]։ Մինչդեռ «վարձ» հասկացողությունը ընդհանուր է և նրա տակ ենթադրվել է թե՛ հատավարձը կամ գործավարձը, և թե՛ մեկ օրվա կամ ավելի երկար ժամանակի համար ստացվող վարձը։ Վարձատրության այս երկու ձևերն էլ իրոք եղել են միջնադարյան Հայաստանում, սակայն նրանցից և ոչ մեկը չի համապատասխանում «հատվածով գործելուն», քանի որ «հատվածով գործել» կամ հատվածով աշխատել, պարզապես նշանակել է պատվիրատուի համար որևէ բան պատրաստելիս աշխատանքի դիմաց ստանալ հատուած-մաս, բաժին պատվիրատուի հանձնած նյութից՝ գործվածքից, կաշվեղենից, մետաղից, փայտից և այլն, մի երևույթ, որը շատ տարածված է եղել միջին դարերում։ Աշխատանքի դիմաց պատվիրատուի նյութից «հատուած»—մաս ստանալը սովորական է եղել դեռևս գյուղատնտեսությունից չանջատված արհեստագործության համար։ Գյուղական արհեստավորը պատվիրատուի նյութից ստացած իր բաժնից պատրաստում էր իրեր, պատվերով կամ ուրիշներին վաճառելու և հաճախ էլ կիրակնօրյա վաճառատեղիները և քաղաքները դուրս բերելու համար։ «Հատուածով» աշխատելը պահպանվեց նաև հետագայում, չնայած այն բանին, որ արհեստավորները կենտրոնացել էին քաղաքներում և նյութը մեծ մասամբ ձեռք էին բերում ընկերովի՝ համքարությունների միջոցով։

Քաղաքների արհեստավորները, առևտրականները և այլ բնակիչները հաճախ կարիք էին ունենում օրավարձով աշխատող սեպագործ բանվորների, իսկ այդպիսիները քաղաքներում կային ավելի, քան պահանջվում էր։ Միջնադարյան քաղաքներում առաջացել էր սեպագործների ամբոխը կամ հայկական աղբյուրներով մեզ հայտնի վարձկանների սոցիալական խավը։ Սեպագործների ամբոխի սպառիչ բնութագիրը տվել են Կ. Մարքսը և Ֆր. Էնգելսը։ Սեպագործները կամ վարձկանները «բոլորովին դուրս էին կանգնած ֆեոդալական դասային կառուցվածքից, ապադասակարգայնացված էին, դրված էին համարյա թե պարիկոսների վիճակի մեջ, որոնց երևան գալը անխուսափելի է ամեն քաղաքի ձևավորման ժամանակ, որոնք կազմում էին ամեն մի միջնադարյան քաղաքի բնակչության ամենաստորին և իրավազուրկ շերտը և դուրս էին գտնվում համայնքից, ֆեոդալական կախումից և արհեստավորական միությունից»[3]։

Քաղաքների և արհեստագործության զարգացմանը և աճին համեմատ բազմանում էր նաև օրավարձով աշխատող սեպագործների թիվը, քանի որ սրանց կարիքը ավելի ու ավելի էր զգացվում։ «Օրավարձով աշխատանքի պահանջը բաղարներում,— նշում են Կ. Մարքսը և Ֆր. Էնգելսը,—ստեղծեց սեպագործների ամբոխը»[4]։

Վարձկաններ կային անտիկ աշխարհի, նույնիսկ հին Արևելքի քաղաքներում, որն իր արտահայտությունը գտել է Մովսեսական օրենքների մեջ[5]։ Միջնադարյան Հայաստանի քաղաքներում օրավարձով աշխատողների կամ վարձկանների մասին առաջին տեղեկությունը գտնում ենք Թովմա Արծրունու մոտ,

---

[1] „Армянский судебник Мхитара Гоша". Ереван, 1954, стр. 221.

[2] Վ. Ա. Արրահամյան. *Արհեստները Հայաստանում IV—XVIII դդ.*, *Երևան, 1956*, *էջ 237*։

[3] *К. Маркс и Ф. Энгельс*, Сочинения, т. IV, стр. 41—42.

[4] *Նույն տեղում, էջ 42*։

[5] *Աստուածաշունչ Հնացոց, գլ. ԺԹ, 13, Երկրորդ օրինաց, գլ. ԻԴ 14, 15*։

որը հիշատակում է. «առօրեայ վարձ վարձկանի»[1]։ Վարձկանների թշվառ վիճակը պարզ կերպով դրսևորված է Դավիթ Ալավկա որդու Դատաստանագրքում, որտեղ օրենք կա այն մասին, թե գործի տերը մարդկանց չպետք է ուղարկի վտանգավոր աշխատանքի կամ վտանգավոր ճանապարհ, իսկ եթե ուղարկում է և ճանապարհին փորձանք կամ մահ է պատահում, ապա նա պատասխանատու է։ Այնուհետև ասվում է, որ եթե գործի տերը զգուշացնում է վտանգի մասին «եւ վարձկանն առ կարիս հարկի իւրոյ յանձն առնուցու, և կրկին անպարտութեան բանն ասէ առ նայ և անդ պատահեն մահ՝ անպարտ է...»[2]։

Նույն օրենքը նկատելիորեն փոփոխված գտնում ենք նաև Մխիթար Գոշի Դատաստանագրքում[3]։ Գոշը ասում է, որ այն դեպքում, երբ գործի կամ ճանապարհի վտանգավորության մասին շատերն են վկայում, և գործի տերը այնուամենայնիվ մարդ է ուղարկում այդ վտանգավոր տեղը և մահ է պատահում, ապա նա վնասվածի արյան համար պատասխանատու է, «թէպէտ և վարձու իցէ»։

Վարձկանի անմխիթարական վիճակի մասին կարելի է գաղափար կազմել Մխիթար Գոշի Դատաստանագրքի երկրորդ մասի 83-րդ օրենքից, որտեղ ասված է. «Մի՛ զլացէր զվարձս տնանկին և զկարօտելոյ եղբարց քոց կամ յեկաց քաղաքաց քոց. նոյն օրին հատուցես զվարձս նոցա և մի՛ մտանիցէ արեգակն ի վերայ այնորիկ, զի տնանկ է և այն է յոյս նորա...»։ Մովսեսական այս օրենքը համապատասխան գտնելով նաև միջնադարյան քաղաքների վարձկանների վիճակին, Գոշը ավելացնում է. «Յայտ է զի յաղագս աղքատութեան եղև վարձական և աւուրն պիտոյից. զի թէ ոչ հատուցէ յաւուր գործոյն դատաստանաւ է աւելի քան որ վարձն իցէ հատուցանել»[4]։

Շատ որոշակի է ասված՝ վարձկանը տնանկ է և կարոտյալ, վարձական է դարձել օրվա կտոր հացը ձեռք բերելու համար, ուստի պետք է նրա վարձը տալ մինչև արևի մայր մտնելը, քանի դեռ քաղաքի շուկան ու դարպասները չեն փակվել, որպեսզի վարձկանն իր օրվա ուտելիքը գնել կարողանա։ Այս վկայությունից միաժամանակ պարզ երևում է, որ վարձկանին սովորաբար վճարվում էր դրամով։

Վարդան Այգեկցին իր մի քարոզում ասում է, որ «վարձն ի վաստակոցն և ի քրտնացն լինի»[5], իսկ Գոշը նշում է, որ վարձկանի վարձատրության չափը կարող է տատանվել նայած տեղի և ժամանակի հանգամանքներին. եթե վարձկանների թիվը մեծանում է, ապա նրանց վարձը նվազում է և ընդհակառակը[6]։

Օրավարձով աշխատող այս սեպագործները կամ վարձկանները մյուսներին հավասար իրավունքներից չէին օգտվում անգամ գանձ գտնելու դեպքում։ Մխիթար Գոշի Դատաստանագրքի մի հոդվածում նախատեսվում է, որ եթե երկու ոսկու կամ արծաթի գանձ է գտնվում, ապա դա թագավորին է պատկանում, իսկ

---

[1] Թովմա Արծրունի, Պատմութիւն, էջ 308։

[2] Դավիթ Ալավկա որդի, Դատաստանագիրք, Մատենադարանի ձեռագիր № 849, էջ 37ա։

[3] Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, էջ 421։

[4] Նույն տեղում, էջ 393։

[5] Վարդան Այգեկցի, Վասն ողորմութեան և սիրոյ և գթութեան, Մատենադարանի ձեռագիր № 8030 էջ 192ա։

[6] Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, էջ 433։

գանողին տրվում է տասանորդ գյուտի համար, տասանորդ է տրվում նաև տրվյալ վայրի տիրոջը։ Ըստ որում եթե գտնողը «վարձկան ոք իցէ», ապա նրան տասանորդ չի տրվում, այլ միայն աննշան բաժին է հանվում[1]։

Վարդան Այգեկցու մի առակից պարզվում է, որ քաղաքներում եղել է հատուկ վայր՝ տեղի մշակաց, որտեղ հավաքվելով՝ վարձկանները վաղ առավոտից սպասում էին, թե մեկն ու մեկը կգա իրենց գործ տալու։ Առակում պատմվում է, թե թագավորի որդին կշտամբում է հորը անիրավության համար, և հայրը որդուն վտարում է պալատից։ Գնալով մի օտար քաղաք, թագավորի որդին ոչինչ չի ուններում պարեն գնելու համար, «զի կարի դատարկ էր, և ելեալ ի տեղի մշակացն զի կալցեն զնայ ի վարձու. և ոչ կալան զնայ ի վարձու»։ Երեկոյան տուն վերադառնալով թագավորի տղան կնոջն ասում է, «այն որ զիս վարձու կալաւ, նա ասաց վաղն էլ եկ բանեց. որ զ Բ աւուր վարձն մեկ տարպէ տամ»։ Սակայն նրան վարձող չի գտնվում նաև երկրորդ և երրորդ օրերը[2]։

Բոլոր դեպքերում էլ վարձկանները հանդես են գալիս որպես ընչազուրկ և ծայրահեղ կարիքի մեջ գտնվող մարդիկ, որոնք ապրում են օրվա պատահական վաստակով, իսկ երբեմն այդ էլ չեն ուններում։ Վարձկանները միաժամանակ անկազմակերպ միայնակներ էին, որպիսի հանգամանքը ավելի էր ծանրացնում նրանց վիճակը։

Իսկ ի՞նչն էր վարձկաններին դեպի քաղաք ձգողը։ Իհարկե, դրա համար կային մի շարք պատճառներ, բայց առաջին հերթին նշանակություն ուներ քաղաքների տնտեսական կենտրոն դառնալը, որի շնորհիվ այնտեղ կարելի էր աշխատանք գտնել և օրվա հացը վաստակել, ինչպես և քաղաքային բնակչության ազատ լինելը ճորտությունից, որը առաջ էր բերել ճորտերի մշտական փախուստը դեպի քաղաք։

Անհրաժեշտ է նշել, որ վարձկանների սեզոնային և անկազմակերպ ամբոխի առկայությունը բնորոշ էր ֆեոդալական քաղաքի համար։ Օրավարձով աշխատանքը ֆեոդալական կարգերին բնորոշ վարձու աշխատանք էր և ենթարկված էր ֆեոդալական շահագործման օրենքներին։ Միջնադարյան քաղաքների մշակ—վարձկանների և նրանց գործ տվողների միջև վարձու աշխատանքի և կապիտալի փոխհարաբերություններ որոնելը սխալ կլիներ, քանի որ վարձկանի աշխատանքը ստեղծում էր հավելյալ արդյունք, բայց ոչ հավելյալ արժեք, ուստի այն նպաստում էր ֆեոդալական հավելյալ արդյունքի աճին միայն։

Հաճախ վարձկանների օրավարձը չվճարելով ստիպում էին նրանց ծանր պայմաններով աշխատել և հաջորդ օրերը, անդամ կիրակի օրերն ու զիշերները[3]։ Վարդան Այգեկցու մի քարոզից երևում է, որ վարձկանների աշխատանքը տևում էր 12 ժամ և ավելի՝ արևածագից մինչև մայրամուտ[4]։ Վարձկանների աշխատանքը խիստ հսկողության տակ էր լինում, խմբով աշխատողների վրա կարգվում էին վերակացուներ, որպեսզի ստիպեն նրանց լարված աշխատել։ Մի ձեռագրում ասված է՝ «սովոր են վարձկանք փոյթ առնել գործոյն մերձ գոլով վերակացուին»[5]։

---

[1] Մխիթար Դոշ, *Դատաստանագիրք*, էջ 328։

[2] Վարդան Այգեկցի, *Առակների ժողովածու*, հատ. 2-րդ, էջ 146—147։

[3] *Մատենադարանի ձեռագիր № 3839*, էջ 72—77։

[4] Լ. Խաչիկյան, *Ազատագրական դաշտաբանությունը Հայաստանում* XII—XIV *դարերում (Ն. Մառի անվան կարինետի «Աշխատություններ», № 2, 1947, էջ 188)*։

[5] *Մատենադարանի ձեռագիր № 573*, էջ 40ա, բ։

Քաղաքի ֆեոդալական վերնախավը, այդ թվում նաև բարձր հոգևորակա-նությունն ու մեծատունները ունեին և որոշ թվով ճորտեր՝ քաղաքում կամ նրա մերձակայքում սեփական անտեսության մեջ օգտագործելու համար։ Ճորտերը զգալի դեր էին խաղում ֆեոդալների այգիների ու պարտեզների, բանջարանոց-ների ու քաղաքամերձ հողերի մշակման գործում։ Ճորտական աշխատանքն օգտագործվում էր անասնապահության մեջ, դաշտում, գոմերում և այլուր։ Սա-կայն ճորտերն ապրում էին առավելապես քաղաքներից դուրս՝ ֆեոդալների և մեծատունների տիրույթներում, ուստի քաղաքային բնակչության կազմի մեջ առանձին տեղ չէին գրավում։

Քաղաքներում լինում էին և փոքրաթիվ մշակներ, որոնք պայմանավոր-ված ժամանակամիջոցում, սովորաբար աշխատանքի այս կամ այն սեզոնում անհրաժեշտ վարձով աշխատում էին ֆեոդալների և մեծատունների մոտ և ժամա-նակը լրանալուց հետո կարող էին իրենց վարձը ստանալով հեռանալ։ Հով-սեփ Դվինցու վարքագրության մեջ ասվում է, թե ոմն Սարգիս «կայր ի տանս նոցա (Հովսեփենց տանը՝ Դվինում) մշակարար»[1]։

Պետք է նկատել, որ «մշակ» տերմինը ավելի լայն իմաստ ուներ, քան «վարձկանը»։ Եթե վերջինս սովորաբար ամեն ինչից զուրկ և օրավարձով աշ-խատող մարդ էր, ապա մշակ կարող էր համարվել և՛ վարձկանը, և՛ որոշ պայ-մաններով ու տևական ժամանակով մշակություն անող ազատը, և՛ այս կամ այն սեզոնում, առավելապես երկրագործական աշխատանքների ժամանակ լրացուցիչ եկամուտ ձեռք բերելու նպատակով գործատիրոջ կամ իր սեփական գործիքներով աշխատանք կատարող շինականը։

Նկատի ունենալով վարձկանների և մշակների աշխատանքը, Գոշն իր Դա-տաստանագրքում սահմանում է. «Վարձկանք որք տերանց գործեօք վարին, որ-պէս երկրագործք. ի վնասիլն գործիս ըստ սովորութեան՝ անպարտք են. իսկ իւրեանց ի գործսն վնասելով՝ վճար լիցի տերանցն։ Իսկ ինքեանց գործեօք վարելով, որպէս հնձողք, ինքեանց վնասն լիցի. իսկ եթէ զտեառն ի վարձու առցէ և ըստ սովորութեան վնասիցի՝ տեառն լիցի։ Այլ թէ յանօթ ի տեառնէ առնուն և վնասիցէ, վճար լիցի։ Եւ չարակամութեամբ վնասելով՝ վճար լիցի»[2]։ Գոշի այս հոդվածը նկատի ունի ոչ միայն վարձկանների հասարակական որո-շակի խավը, այլև ընդհանրապես վարձատրությամբ գործ կատարողներին, որոնք աշխատում էին տիրոջ գործիքով տիրոջ համար (եթե գործիքը փչանում էր սովորական ձևով պատասխանատու չէին, իսկ չարակամությամբ փչաց-նելու դեպքում պատասխանատվություն կրում էին) կամ տիրոջ գործիքով՝ իրենց տնտեսության մեջ, երբեմն էլ վարձով վերցնելով գործիքը՝ աշխա-տում էին ում մոտ որ պատահեր և այս դեպքում պարտավոր էին հա-տուցել փչացրած գործիքի համար։ Վերջապես, վարձով աշխատողները երբեմն էլ գործածում էին իրենց գործիքները, որոնց փչանալու դեպքում վնասն իրենք էին կրում։ Պարզ է, որ այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե տևական վարձու աշխատանքին մանուֆակտուրային ձեռնարկատիրոջ մոտ, այլ պատահական վարձու աշխատանքին՝ ֆեոդալների, մեծատունների և քաղաքացիների մոտ։

Քաղաքային բնակչության սոորին խավի ամենաաղքատ մասի համար աղբյուրներում հաճախ գործածվում են «աղքատք», «կարոտողք» «տնանկք»,

---

[1] «Հայոց նոր վկաները», Վաղարշապատ, 1903, էջ 47։

[2] Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, ՃԻԵ, էջ 437։

«տառապելք», «սինլքորք»[1] և նման այլ հորջորջումներ։ Դրանց մի մասը օրավարձով աշխատանք կատարողներ էին, բոլորովին կամ համարյա բոլորովին ընչազուրկ մարդիկ, որոնք զուրկ էին անգամ տուն ու տեղից և պատահական աշխատանքով դատում էին իրենց ապրուստը։ Մյուս մասը, ամեն ինչից զուրկ լինելով, մուրացկանության էր դիմում։ Միջնադարյան քաղաքներում մուրացկանների թիվը բավականաչափ մեծ էր։

Տնանկ տերմինը, ինչպես տեսանք, երբեմն գործածվում է օրավարձով աշխատող սեագործների համար։ Բայց դա ընդհանրապես նշանակում է տուն-տեղ և ապրուստի միջոցներ չունեցող։ Հաճախ հանդիպում է և «տառապյալ» տերմինը, որը երբեմն անպատսպար, տնանկ իմաստով է գործածվում, ինչպես Գրիգոր Նարեկացու մոտ՝ «Աննուազ լիութիւնդ՝ ընդ չքաւոր ստրկին։ Անկապուտ ճոխութիւնդ՝ ընդ անպատսպար տառապելոյ»[2]։

Ֆրիկի մոտ տառապյալը մուրացկան է։ Խոսելով մեծատան մասին, Ֆրիկն ասում է.

Տառապելքն են ի գուռն եկել,
Որ իւրեանցն կտոր մուրայցեն[3]։

Վարդան Այգեկցին խոսում է նաև վերջին աղքատի մասին, «որ մաշի յաղբն»[4]։

«Պարտապան այր» առակում նա պատմում է այնպիսի մարդկանց մասին, որոնք ծանր պարտքի տակ են ընկել, ազատվելու ճար չունեն և խիստ նեղվում են պարտատերերից։

Քաղաքներում կային նաև զգալի թվով տնային ծառաներ և աղախիններ։ Ինչպես երևում է աղբյուրներից, դրանք ժամանակավոր կամ մշտական ստրկական աշխատանք էին կատարում։

Ծառայի կամ աղախնի վիճակի մեջ ընկնում էին գերիները, ծայր աստիճանի աղքատ մարդիկ, որոնք պարտքի դիմաց, երբեմն էլ իրենց գոյությունը պահպանելու համար պայմանով ծառայության էին մտնում ֆեոդալների և մեծատունների մոտ։ Ծառաների վիճակը այնքան ծանր էր, որ Դատաստանագրքերում հատուկ հոդված կա նրանց փախուստի մասին։

Դավիթ Ալավկա որդին 44-րդ հոդվածով սահմանում է, որ եթե գերին կամ ծառան փախչելով դիմում է բնակչությանը և խնդրում, որ իրեն թաքցնեն կամ ազատեն փրկավճարով, պետք է նրան ազատել, սակայն միաժամանակ զգուշացնում է, թե պետք է ստուգել փախչողներին, քանի որ աղքատները աներկյուղ են բռնավորների ու հարկահանների առջև, և պետք է զգուշանալ նմաններին ազատելուց[6]։

Մխիթար Գոշի Դատաստանագրքից իմանում ենք, որ ծառայության կարող էին հարկադրվել ոչ միայն աղքատներն ու աղքատության պատճառով

---

[1] Սինլքորները հիշատակված են Կիրակոս Գանձակեցու մոտ (Պատմ., էջ 223), բայց դրանք հասարակական առանձին շերտ չէին կազմում։ Այդպես անվանվում են քաղաքային ամենաստորին խավերի ներկայացուցիչները հավաքական իմաստով։

[2] Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, էջ 76։

[3] Ֆրիկ, Բանաստեղծություններ, 1941, էջ 129։

[4] Մատենադարանի ձեռագիր № 770, էջ 191բ։

[5] Վարդան Այգեկցի, Առակների ժողովածու, հ. 2-րդ, էջ 218։

[6] Մատենադարանի ձեռագիր № 839, էջ 59ա – 61ա։

պարտքի տակ ընկածները, այլև զանազան հանցանքների՝ մանավանդ մարդասպանության և ուրիշներին խեղելու համար դատարանով տուգանքի ենթարկված անձինք, այն դեպքում, երբ սրանք միջոցներ չունեին տուգանքը վճարելու։ Այսպիսի աղքատները վաճառվում էին հարուստներին՝ իբրև ծառա և կարող էին ազատվել փրկավճարով կամ ծառայության ժամանակաշրջանն ավարտելուց հետո։

Ծառայությունը փաստորեն անվճար ստրկական աշխատանք էր, որից փախչելու փորձերը սովորական երևույթ են եղել։

Ծառայության ժամկետը որոշվում էր փրկավճարի չափով, իսկ փրկավճարը՝ մարդու արյան դնի 1/3-ի չափով։ Արյան գինը սահմանված էր 365 դահեկան ոսկով կամ մեկ դահեկանի դիմաց 13 արծաթ դրամի հաշվով[1]։ Դրա մի քառորդը վճարելով կարելի էր ազատվել ծառայությունից։ Փրկավճարը հավասարեցված էր մարդու խեղանդամության համար սահմանված դնին։ Եթե տերը խփել, կուրացրել էր ծառային, կոտրել նրա ձեռքերը, ոտքերը, կամ թափել նրա ատամները, ապա պարտավոր էր ազատել նրան[2]։ Դեռևս Մովսեական օրենքներից եկող այս կարգը Մխիթար Գոշը վավերական է համարում և իր ժամանակների համար։

Ծառաները պարտավոր էին տարիների ընթացքում կատարել ձրի աշխատանք, ենթակա էին վաճառքի, ծեծի, խոշտանգման ու խեղման։

Պարտքի կամ փրկավճարի դիմաց ծառան պետք է աշխատեր 6—7 տարի (ազատվում էր 7-րդ տարվա ընթացքում)։ Դա կոչվում էր «ըստ գնոյ ծառայել»[3]։

Ծառաները վաճառվում էին քաղաքի ֆեոդալներին և մեծատուններին թե՛ քաղաքներում, և թե՛ բերդ-գյուղերում։ Նրանց կարելի էր գնել, վաճառել, վերավաճառել և նվիրել, նրանց նաև գողանում էին[4]։

Մխիթար Գոշի Դատաստանագրքից իմանում ենք, որ եթե ծառան մենակ կամ կնոջ հետ միասին էր մտել ծառայության, այդ դեպքում ծառայության ժամկետը լրանալուց հետո երկուսն էլ ազատվում էին, իսկ եթե տերը իր ծառային կին էր տվել և երեխաներ էին ծնվել, միայն ամուսինն էր ազատվում, իսկ կինն ու երեխաները մնում էին տիրոջ մոտ իբրև ծառաներ։ Նրանք կարող էին ազատվել փրկավճարով, իսկ եթե ազատված ծառան միջոց չուներ իր կնոջն ու երեխաներին ետ գնելու և չէր էլ ցանկանում հեռանալ նրանցից, ապա տերը նրան տանում է եկեղեցի «և քահանայիւք և հաւատարիմ վկայիւք և գրով առցէ զնա ծառայ յաւիտեան»։ Այսպիսի ծառան, եթե հետագայում միջոցներ էլ ունենար փրկավճար տալու, միևնույն է՝ իրավունք չուներ ազատվելու[5]։

Ծառաների նույն վիճակը սահմանված էր և աղախինների համար, դրանք այս ժամանակաշրջանում կին ծառաներ էին, որոնց ծառայության էին վաճառել իրենց աղքատ ու պարտապան ծնողները[6]։

Մխիթար Գոշի Դատաստանագրքից երևում է, որ միջին դարերում որոշ թվով աղքատ ծնողներ պարտքի տակ ընկնելով կամ հարկադրական ծախքի

---

[1] Մխիթար Գոշ. Դատաստանագիրք, էջ 309։
[2] Նույն տեղում, էջ 343։
[3] Նույն տեղում, էջ 335։
[4] Նույն տեղում, էջ 333—335, 391։
[5] Նույն տեղում, էջ 337։
[6] Նույն տեղում, էջ 335—336։

առաջ կանգնած՝ ստիպված էին լինում իրրև ծառա կամ ազախին ժամանակավոր կամ հավիտյան ստրկության վաճառել իրենց զավակներին, երբեմն էլ իրենք էին ծախվում ընտանիքով հանդերձ։

Ծառաների և ազախինների թվում ամենից ծանրը գերիների վիճակն էր։ Օտար ծագում ունեցող գերիները ծառա կամ ազախին դառնալով յոթ տարի աշխատելուց հետո ազատվում էին ծառայությունից եթե մկրտվում էին, այսինքն՝ քրիստոնեություն էին ընդունում, իսկ եթե ոչ՝ մնում էին իրրև ծառա—ստրուկ և ենթակա էին վաճառքի։ Նրանք չէին ազատվում և վաճառվում էին անգամ խեղանդամ դառնալուց հետո, բայց էժան գնով[1]։ Այս կարգը հայերի և ընդհանրապես քրիստոնյաների նկատմամբ օտարների մեջ գործող օրենքի պարզ կրկնությունն էր։ Քաղաքային կյանքի, դրամական շրջանառության և վաշխառության զարգացումը և աշխատավոր բնակչության ընչազրկումը որոշ պայմաններ էին ստեղծում ժամանակավոր ստրկության աճի համար։ Սակայն ստրկական աշխատանքն այս ժամանակաշրջանում խոշոր դեր չէր կատարում և կիրառվում էր գերազանցապես տնային ծառայության ձևով՝ ունենալով մեծ մասամբ ժամանակավոր բնույթ։ Գրով ու երդումով հավիտենական ստրուկ հաստատվածների թիվը ավելի փոքր էր, քան գերի վերցված մշտական ստրուկների թիվը։

Անիում գտնվող ծառաների մասին ուշագրավ մի վկայություն պահպանել է Մատթեոս Ուռհայեցու պատմության շարունակողը։ Պատմելով 1161 թ. Անիի պատերի տակ տեղի ունեցած դեպքերի մասին նա ասում է, թե վրացիների գրավումից հետո, Անիի վրա շարժվեց Խլաթի Շահի Արմենի 80 հազարանոց բանակը, որը պաշարեց քաղաքը։ Սակայն թշնամու վրա հարձակվելով, վրաց զորքերը ծանր պարտության մատնեցին նրան և վերցրեցին խոշոր ավար ու մեծ թվով գերիներ։ Այնուհետև պատմիչը շարունակում է, թե Գեորգին վերցնելով Անին «երեսք քառասուն հազար դահեկան և գնեաց ի հեծելէն զգերեալ ծառայսն Անւոյ՝ քրիստոնեայ և պայլազգի»[2]։

Ակադ. Հ. Մանանդյանի կարծիքով այստեղ խոսքը վերաբերում է «Շիրակ-Անիում վերցրած գերիների ետ գնման»[3]։ Եթե ընդունենք այս տեսակետը, պիտի ավելացնենք, որ պատմիչը նկատի ունի այն գերիներին, որոնք փրկավճարով ազատվելու միջոցներ չունենալով, գերի էին տարվում իրրև ստրուկ։ Սակայն բնագրի «զգերեալ ծառայսն Անւոյ» արտահայտությունը և ծառաների թվում քրիստոնյաներից բացի այլազգիների առկայությունը թույլ են տալիս ենթադրելու, որ այստեղ խոսքը վերաբերում է Անիում գտնվող ծառա-ստրուկներին, որոնց գերի էին վերցրել թշնամու հեծյալները։ Ուռհայեցու պատմության շարունակողը տեղեկություն է պահպանել նաև այն մասին, որ վրացիները «առին ծառայս երկու հազար և հինգ հարիւր»[4]։ Սակայն աղբյուրներից մենք իմանում ենք, որ վերցված գերիների թիվը շատ ավելի մեծ էր գոհվածների (7000) թվից և ըստ դեպքերին ականատես Սամվել Անեցու 23 հազարի էր հասնում[5]։ Ալ-Ֆարիքիի վկայությամբ գերի էին ընկել «շուրջ 9000 մուսուլ-

[1] Մխիթար Դոշ, Դատաստանագիրք, էջ 343։

[2] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 426—427։

[3] Հակոբ Մանանդյան. Ինքնակամ տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր 3-րդ, էջ 112։

[4] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 426։

[5] Սամվել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 137։

ման՝ հեծյալ և հետիոտն, Սուքմանի տոհմի ազնվականներ և ուրիշներ»[1]։ *Այդ 2500 ծառաները կա՛մ տնեցիներից թշնամու վերցրած ծառաներն էին, որոնք ետ խլվեցին պատերազմի դաշտում առանց փրկավճարի, կա՛մ թշնամու զորքերի թվից վերցված այն գերիներն էին, որոնք պետք է ծառա (ստրուկ) դառնային՝ զուրկ լինելով փրկավճարով ազատվելու հնարավորությունից։ Հենց այս կարգի գերիներին վրացիներից ետ է գնում հակառակորդը։ Ալ-Ֆարիքիի ասելով Շահի-Արմենի վեկիրը «ուղարկեց 1000 դինար կազմող մի գումար՝ ետ գնելու այնպիսի մուսուլման գերիներ, որոնք ո՛չ ընտանիք ունեին, ո՛չ էլ փող»*[2]։

Բերված փաստերից երևում է, որ ծառաների՝ այդ ժամանակավոր կամ մշտական ստրուկների թիվը քաղաքներում այնքան էլ փոքր չէր։ Մոնղոլական արշավանքության ժամանակ ստրկական վիճակի մեջ ընկան նաև շատ արհեստավորներ, որոնք աշխատում էին հանքավայրերում կամ պետական քարխանաներում[3]։

Այն հարցի տեսակետից, թե ինչ պատկերացում ունեին միջին դարերի գործիչները ֆեոդալական հասարակության սոցիալական կազմի, դասերի ու շերտերի վերաբերյալ, որ շերտերն էին համարվում վերադաս և որոնք՝ ստորադաս, մեծ կարևորություն են ներկայացնում Ներսես Շնորհալու թղթերը։

Ընդհանրական թղթում, գրված XII դարի 60-ական թվականներին, Ներսես կաթողիկոսը դիմում է քաղաքների, գյուղերի և ագարակների բնակիչներին՝ ըստ երկնային դասերի թվի զետեղելով դրանց ինը դասի մեջ[4]։ *Ահա թե ում է դիմում նա.*

«Քահանայապետաց և քահանայից, վանականաց և քաղաքայնոց, իշխանաց և իշխեցելոց, զինուորաց դասուց՝ ձիավարժից և հետևակաց, գաւառապետաց և գործակալաց, տանուտէրաց և երկրագործաց, վաճառականաց և արուեստագիտաց...»։

Նույնպես ինը դաս, ավելի որոշակի, բայց հերթականության որոշ փոփոխությամբ, Շնորհալին հիշատակում է նաև Կարս քաղաքի բնակիչներին հասցեագրված իր ուղերձում.

«...Այս մեր գիր օրհնութեան հոգևորական հրամանի՝ է..., զոր գրեցաք յանմատոյց զղեակդ և հոյակապ քաղաքդ Կարս և որ ընդ դովաւ նահանգք դեղօրէից, վանօրէից և ագարակաց. որոց այսոցիկ ամենեցուն՝ սրբազան հարց (1), խաչակրօն միանձանց (2), աստուածարեալ և շնորհազարդ քահանայից (3), մեծազարմ իշխանաց (4), քրիստոսասէր զինուորաց (5), արգասու վաճառականաց (6), պատուաւոր տանուտերաց (7), աշխատասէր երկրագործաց (8), ձեռնահմուտ արուեստագիտաց (9)...»[5]։

---

[1] *V. Minorsky*, Studies in Caucasian History, London, 1953, p. 90.

[2] *Նույն տեղում, էջ 91։*

[3] *Պղնձի այպիսի մի հանքավայր* معدن *և բարխանե համդաան Զաղվինին հիշատակում է Այունիքի Աջնան կոչվող վայրում։ (Տե՛ս И. П. Петрушевский*, Хамдалах-Казвини как источник истории Восточного Закавказья, „Известия" АН СССР, 1937, № 4, стр. 909—910).

[4] *Ներսես կաթողիկոս, Թուղթ ընդհանրական, էջ 1—2։*

[5] *Նույն տեղում, էջ 302—303։ Փակագծերի մեջ մեր կողմից գրված 1—9 համարները դասերի համարներն են ցույց տալիս։*

Մեջ բերված երկու հատվածում էլ Ներսես Շնորհալին երկրի ամբողջ բնակչությանը բաժանում է ինը դասի, որից երեքը կազմում են հոգևորականները, երեքը՝ ազնվականները, զինվորականությամբ և տեղական պաշտոնեությամբ հանդերձ և երեքը՝ գյուղի ու քաղաքի հիմնական բնակչությունը՝ երկրագործները, առևտրականները և արհեստավորները[1]։

Երկու դեպքում էլ ամենից վեր դասված է հոգևորականությունը՝ իր երեք ստորաբաժանումներով։ Այդպես վարվում էին բոլոր եկեղեցական գործիչները, ելնելով այն բանից, որ ժողովրդի հոգևոր տերերը վեր են նրա մարմնավոր տերերից։

Հոգևորականներից հետո, երկու դեպքում էլ հիշատակված են իշխանները, այսինքն աշխարհիկ ֆեոդալները, ապա զինվորների «դասը»։ Դրանից հետո, երկու հատվածների մեջ հիշատակված «դասերը» նույնն են, սակայն բերված են տարբեր հերթականությամբ։ Ամբողջ բնակչությանն արված դիմումի մեջ զինվորականներից հետո հիշատակված են գավառապետները, գործակալներն ու տանուտերերը, ապա երկրագործները և վերջում քաղաքի բնակիչները՝ վաճառականներն ու արհեստավորները, որովհետև սրանք անցյալում նկատելի շերտ չէին կազմում և մանավանդ որ եկեղեցական գործիչները քաղաքները համարում էին մարմնավոր արատների բուն, իսկ քաղաքացիներին՝ դրանց կրողները։

Մի փոքր ավելի ուշ գրված երկրորդ թուղթը ուղղված է մեծ և վաճառաշահ քաղաք Կարսի բնակչությանը և պատահական չէ, որ հեղինակը նկատի ունենալով խոշոր վաճառականներին, նրանց ութերորդ տեղից բարձրացնում է վեցերորդ տեղը «պատուաւոր տանուտերներից» և «աշխատասեր երկրագործներից» առաջ։

Նույն երկվությունը տեսնում ենք և այլ աղբյուրներում։ Վաճառականները երբեմն սուր հանդիմանության, երբեմն էլ գովասանքի են արժանացել։ Արհեստավորներին երկու թղթում էլ հատկացված է վերջին տեղը։

Ընդհանրական թղթում գործածվում է և «քաղաքականք» ավելի ընդարձակ իմաստ ունեցող տերմինը. «Առ քաղաքականսդ» վերնագրի տակ ասված է. «Պատուէր տամք և քաղաքայնոցդ և որք ի վաճառափողոցս նստիք գնել և վաճառել և առ արուեստաւորսդ, զի ուղղութեամբ տանիցիք զկեանս ձեր և անարատ քաղաքավարութեամբ»։ Այստեղ հասկացվում են վաճառականներն ու արհեստավորները, և դա կարելի է բացատրել երկու հանգամանքով. նախ՝ արհեստավորներն ու առևտրականներն իրոք դիտվում էին իբրև քաղաքային դաս և երկրորդ՝ նրանք կազմում էին քաղաքային բնակչության հիմնական մասը։

---

[1] Համեմատելով այս երկու հատվածները (պայմանական՝ Ա և Բ) հոգևորականության առաջին եամ բարձր դասի տակ Բ հատվածում գտնում ենք՝ «սարբազան հարց», իսկ Ա հատվածում՝ «քահանայապետաց». երկրորդ դասի տակ՝ Բ հատվածում՝ «խաչակրօն միանձանց», Ա հատվածում՝ «վանականաց և քաղաքայնոց»։ Կարծում ենք, որ այստեղ պետք է հասկացվի միանձանց՝ վանականաց և քաղաքայնոց։ Հոգևորական երրորդ դասի տակ երկու դեպքում էլ հիշատակված են քահանաները։

Ազնվական երեք դասից Բ հատվածում գտնում ենք «մեծագարմ իշխանաց», իսկ Ա հատվածում՝ «իշխանաց և իշխեցելոց», որտեղ «իշխեցելոց» բառի գոյությունը արդյունք է սուտ հուտորական ոճի։ Երկրորդ դասի տակ երկու դեպքում էլ գտնում ենք զինվորներին՝ հեծյալ և հետակ։

[2] Ներսես կաթողիկոս, Թուղթ ընդհանրական, էջ 106—107։

Ինչպես աղբյուրներն են վկայում, քաղաքային բնակչությունը համեմատած գյուղերի և ագարակների բնակիչների հետ որոշ արտոնություններ էր վայելում։

Դրա վերաբերյալ հնագույն վկայությունը հանդիպում է Մովսես Խորենացու մոտ, որի ասելով՝ դեռևս Վաղարշակ թագավորը «Հրաման տայ՝ և քաղաքացեաց մարդկան արդոյ և պատիւ լինել առաւել քան զգեղջկաց. և գեղջկաց պատուել զքաղաքացիս որպէս զիշխանս. և քաղաքացեաց մի կարի առ գեղջկօքն պերճանալ, այլ եղբայրաբար վարիլ...»[1]։ Այստեղ որոշակի ակնարկ կա Հայաստանի անտիկ շրջանի քաղաքների բնակչության ինքնավարության և արտոնությունների մասին, որոնց հետքերը պահպանվում էին և վաղ միջնադարում։ Այլ կերպ չի կարելի հասկանալ Հովհաննես կաթողիկոսին, երբ նա ասում է թե VII դարում Զվարթնոցում բնակեցվել է «ամբոխութիւնն երդումարդաց ըստ պայմանի քաղաքականաց»[2]։

Այդ օրենքը միջին դարերին համապատասխանող խմբագրությամբ ձևակերպել է Մխիթար Գոշն իր Դատաստանագրքում, որտեղ կարդում ենք. «Արք (ի միում օրինակի արդ) քաղաքացիք առաւել քան զգեղջուկս պատուիցին և գեղջկաց նմանապէս առաւել պատիւ լիցի քան բնակչաց ագարակի. սոյնպէս լիցի բերդի բնակչաց և աւանի, զի և կարդ առաջնոցն է մերոց թագաւորացն սոյգոքիկ»[3]։

Եթե Խորենացու մոտ գեղջուկները պետք է պատվեին քաղաքացիներին իբրև իշխանների, ապա Գոշի մոտ այդ տարբերությունը մեղմացած է և ասվում է թե քաղաքացիները պետք է առավել պատիվ վայելեն, քան գեղջուկները։ Բացի այդ Գոշը որոշակի ասում է, թե քաղաքացիների արտոնությունները տարածվում էին նաև բերդի ու ավանի բնակչության վրա։

Սակայն, պարզ չէ, թե ինչ արտոնություններով են օժտված եղել քաղաքացիները։ Դժվար է ենթադրել, թե այդ անհայտ արտոնությունները XII դարում նույնն էին, ինչ որ IV—V դարերում։ Թվում է, թե Մխիթար Գոշի ժամանակներում քաղաքացիների արտոնությունները կարող էին տարբեր ձևերով արտահայտվել։ Նախ՝ քաղաքացիները ազատ չլինելով ֆեոդալական կախումից, միևնույն ժամանակ ենթակա չէին նաև ճորտական կախման. ճորտերի թիվը ուղաքներում աննշան էր։ Երկրորդ՝ հարկեր, տուրքեր վճարելով պետությանը, ֆեոդալներին, մասնակցություն ունենալով քաղաքի ամրությունների կառուցման աշխատանքներին ու նրա պաշտպանության գործին, քաղաքացիները, սակայն, ազատ էին ֆեոդալների օգտին տրվող զանազան պարհակներից ու որոշ պարտավորություններից։

Չնայած դրան, քաղաքի բնակչությունը նույնպես ենթակա էր ֆեոդալական ծանր շահագործման և կեղեքման։

Ամփոփելով ներկա հոդվածում բերված փաստերը և նրանց վերլուծությունը, կարելի է եզրակացնել.

1. Ֆեոդալական քաղաքները Հայաստանում IX—XIII դարերում աչքի ընկնող զարգացում ապրեցին։ Շնորհիվ արհեստագործության, առևտրի ծավալման, հասութաբեր այլ և այլ հաստատությունների՝ իջևանների, պանդոկների,

[1] Մովսես Խորենացի, Պատմութիւն հայոց, Տփղիս, 1913, էջ 117—118։
[2] Հովհաննես կաթողիկոս, Պատմութիւն, էջ 113։
[3] Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, էջ 318։

հյուրանոցների, չրաղացների, ձիթհանների առաջացման ու նրանց թվի մեծացման, քաղաքները դարձան նշանակալից տնտեսական կենտրոններ։

2. Քաղաքների տնտեսական աճին զուգընթաց բազմանում էր նաև նրանց բնակչության թիվը, որը սերտորեն կապված էր մի կողմից՝ քաղաքների տնտեսական կենտրոն դառնալու հանգամանքի հետ, մյուս կողմից՝ քաղաքային բնակչության որոշ արտոնությունների առկայության հետ։ Վերջիններս դրսևորվում էին, գլխավորապես նրանով, որ քաղաքային բնակչությունը ազատ էր անմիջական ճորտական կախումից։ Քաղաքը ձգողական ուժ է ստանում բնակչության տարբեր խավերի, իսկ առաջին հերթին գյուղից եկող արհեստավորության և ճորտությունից փախչող շինականների համար։ Ի վերջո քաղաքի բնակչությունը աճում էր գյուղական բնակչության հաշվին։

3. Ֆեոդալական քաղաքի ձևավորման և զարգացման հետևանքներից մեկն էլ եղավ ֆեոդալական հասարակության սոցիալական շերտավորման խորացումը, որը արտահայտվում էր մի կողմից տարբեր դասերի և շերտերի միջև ունեցվածքային տարբերությունների և անջրպետի մեծացմամբ, մյուս կողմից՝ հասարակական նոր խավերի առաջացմամբ։

4. Քաղաքներում ձևավորվում է մի նոր դաս՝ քաղաքային դասը, որն աղբյուրներում անվանված է Բաղարականք կամ Բաղարականաց դաս։ Սրա մեջ մտնում էին բոլոր քաղաքացիները, որոնք ազնվական, հոգևորական և զինվորական չէին։ Հիմնականում դրանք արհեստավորներն ու առևտրականներն էին։

5. Հետևհետև առաջանում է նաև քաղաքային վերնախավը՝ մեծատուն անունով։ Այս խավը բաղկացած էր ոչ միայն խոշոր առևտրականներից և վաշխառուներից, այլև տնտեսական, հարկային, վարչական ու զինվորական պաշտոնեությունից։ Պաշտոնյաները նույնպես խոշոր հարստություններ կուտակելով մեծատուններ էին դառնում։ Քանի որ ֆեոդալական հասարակության հիմքը կազմում էր հողի ֆեոդալական սեփականությունը, իսկ հիմնական արտադրողների շահագործման ձևերը դեռևս անրաժան կերպով մնում էին ֆեոդալական, դրա պատճառով էլ մեծատունների զգալի մասը, մանավանդ առավել խոշոր մեծատունները դրամի օգնությամբ ձեռք էին բերում հողային սեփականություններ և այլ անշարժ ունեցվածք, որտեղ կիրառում էին շահագործման ֆեոդալական ձևերը և ստանում էին ֆեոդալական հավելյալ արդյունք։ Այսպիսով, նրանք ֆեոդալականանում էին։

6. Քաղաքներում առաջացել էր նաև սեպագործ ամբոխը, որը բաղկացած էր քաղաք եկած շինականներից, առավելապես ընչազուրկ մարդկանցից, և իր ապրուստը հողում էր պատահական գործով՝ աշխատելով օրավարձով իրեն «վարձկան»։ Սեպագործների բազմության մի մասն էլ մուրացկանությամբ էր պահպանում իր գոյությունը։

7. Վերջապես, քաղաքներում գոյություն ուներ ծառաների և աղախինների ինստիտուտ, որը վերարտադրում էր ստրկական հարաբերությունները վերապրուկային և ֆեոդալիզմի պայմաններին հարմարեցված ձևերով։ Դա գերազանցապես ժամանակավոր ստրկություն էր, «ծառայի» և «աղախինի» անվարձահատուց աշխատանքը յոթ տարվա տևողությամբ, թեև փրկավճարով կարելի էր ծառային կամ աղախնին ստրկական վիճակից ազատել սկզբից և ետ, կամ մինչև յոթ տարին լրանալը։ Գոյություն ուներ և այնպիսի կարգ, որով տերը իր ծառային կարող էր դարձնել «հավիտենական» ծառա կամ աղախին,

որպիսի վիճակի մեջ ամենից ավելի ընկնում էին այն դերի ծառաները, որոնք չէին համաձայնում փոխել իրենց դավանանքը, ի՛նչ դավանանքի էլ նրանք պատկաներին։

Այսպիսով քաղաքային բնակչությունը բաղկացած էր ոչ միայն տարբեր դասակարգերից, այլև տարբեր դասերից ու խավերից և անջրպետը նրանց միջև ավելի ու ավելի խորանում էր քաղաքների զարգացմանը համընթաց։ Այս ամենի շնորհիվ ֆեոդալական քաղաքը ներկայանում է իրրև անհամեմատ ավելի բարդ հասարակական կառուցվածք ունեցող և ավելի բազմակողմանի ու սուր ներհակություններ պարփակող մի ամբողջություն, քան գյուղը, ուստի և զգալի փոփոխություններ է առաջացնում զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի հասարակության մեջ։

СОЦИАЛЬНЫЙ СОСТАВ НАСЕЛЕНИЯ СРЕДНЕВЕКОВЫХ ГОРОДОВ АРМЕНИИ

Б. Н. АРАКЕЛЯН

(Резюме)

В истории Армении IX—X века знаменательны возникновением многочисленных феодальных городов. Рост и развитие городов, с известными колебаниями, продолжаются и в последующие столетия и прерываются в 30-х годах XIII в., когда в стране установилось владычество монголов с их пагубной для жизни городов экономической и политической системой.

В IX—XIII вв. происходят значительные сдвиги в социальной структуре феодального города Армении. Состав городского населения приобретает четко выраженный сословный облик.

Наряду с феодальной знатью (с ее военными дружинами) и духовенством возникает новая прослойка городской верхушки — «мецатунов» (Մեծատունք). Она состояла не только из купцов и ростовщиков, но и из служилого люда, из лиц, занимавших в феодальном обществе хозяйственные, фискальные, административно-судебные и военные должности. Обычно мецатуны приобретали большие наделы земли и недвижимое имущество (мельницы, маслобойни, караван-сараи, дома) и становились феодалами. Следовательно, их нельзя отождествлять с капиталистами.

Низшее сословие в городах составляли рамики. В него входили ремесленники и мелкие торговцы, проживавшие в городах земледельцы и представители самых низших слоев городского населения. Сословие рамиков непрерывно росло за счет сельского населения и представляло собой основную массу горожан или городского сословия (бюргерство), именуемого в армянских источниках кахакаканк (քաղաքականք).

Ремесленники и городские земледельцы составляли основное производящее население городов. Производственная роль ремесленников,

объединенных в цехах, и городских земледельцев зависела от степени отделения ремесла от земледелия и роста городов.

В городах возникла прослойка поденщиков, именуемых в армянских источниках «вардзканами» *(վարձկանք)*. Труд вардзканов не мог вызвать отношения наемного труда и капитала и создавать прибавочную стоимость, а скорее способствовал производству феодального прибавочного продукта.

В городах существовали также «мшак» — *(մշակք)* — и временные или сезонные работники из числа бедных горожан, а также беглых крестьян. Немало было и нищих.

На самой низкой ступени находились «царайк» — *(ծառայք)* и «ахахинк» *(աղախինք)* — слуги и служанки, которые фактически находились во временном рабстве. Их можно было купить и продать; они освобождались от рабства по истечении семилетнего срока службы или откупались до истечения этого срока. Существовала и незначительная прослойка постоянных рабов. Таковы были пережиточные формы рабства в средневековых городах.